4 դասարան

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

ՄԱՍ 2

4 դասարան

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

ՄԱՍ 2

ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՆՈՒՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

4 դասարան

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

ՄԱՍ 2

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Աստղիկ Գրատուն»
հրատարակչություն
Երևան 2019

ՀՏԴ 373.167.1:502/504(075.3)
ԳՄԴ 20.1g72
Ա 296

Դասագիրքը հաստատված է Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարության կողմից

ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՆՈՒՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Ա 296 **Ես և շրջակա աշխարհը:** Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք (Մաս 2) / Ն. Թորոսյան, Լ. Ալեքսանյան:
Դասագիրքը ի պահ է վերցված «Հայհեղինակ» կազմակերպությունում N 08/4928 1.04.2019թ.– Եր.: «Աստղիկ Գրատուն», 2019.– 96 էջ:

ՀՏԴ 373.167.1:502/504(075.3)
ԳՄԴ 20.1g72

ISBN 978-9939-74-031-7

© «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, 2019
© Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., 2019

ԴԱՍ 2 ՏԵՂԱՆՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Գլոբուս և քարտեզ

Երկրի վրա ինչ-որ տեղ գտնելու համար օգտվում ենք **գլոբուսից** կամ **քարտեզից**: Գլոբուսը Երկիր մոլորակի փոքրացված պատկերն է: Քարտեզը նույնպես պատկերում է Երկիրը, բայց թղթի վրա:

Դեռ հնագույն ժամանակներից ճանապարհորդները նկարել են Երկրի մակերևույթը, ինչպես որ տեսել են: Իհարկե, տեղանքը քարտեզի վրա շատ ավելի փոքր է իրական չափերից: Առարկայի՝ իրական չափերից մեծ կամ փոքր պատկերը կոչվում է **մասշտաբային** պատկեր: Օրինակ՝ եթե քարտեզի վրա տեղանքը պատկերված է իրականից 100 անգամ փոքր, ասում ենք՝ մասշտաբը «**մեկը հարյուրի**» է և գրում ենք «**1:100**»: Երկու վայրերի հեռավորությունը հաշվելու համար այն պետք է չափել քարտեզի վրա, ապա բազմապատկել մասշտաբով:



Այս զբոսայգին պատկերված է 1:500 մասշտաբով:

Հաշվե՛ք նրա իրական մակերեսը:

1. **Հաշվե՛ք բնակավայրերի միջև ընկած հեռավորությունը, եթե նկարի մեկ սմ-ը հավասար է 10 կմ:**

- Երևանից Հրազդան ☐ սմ = ☐ կմ:
- Երևանից Արտաշատ ☐ սմ = ☐ կմ:
- Երևանից Վաղարշապատ ☐ սմ = ☐ կմ:

Պայմանական նշաններ

Քարտեզների վրա դժվար է ամեն ինչ տեղավորել: Որպեսզի քարտեզը տեղեկություններ տա հատկանիշների մասին, դրանք պատկերում են **պայմանական նշաններով:** Ասենք՝ անտառներ, լեռներ, հանքեր և այլ: Յուրաքանչյուր քարտեզի անկյունում նշված է, թե ո՛ր նշանն ի՛նչ է ցույց տալիս:

Քարտեզի վրա պայմանական նշաններից բացի նշում են մասշտաբը և հորիզոնի կողմերը: Եթե դեմքով կանգնեք դեպի քարտեզը, ապա **արևելքը** կլինի քարտեզի **աջ կողմում, արևմուտքը՝ ձախում, հյուսիսը՝ վերևում, իսկ հարավը՝ ներքևում**:



ճահճուտ

պտղատու այգի

արտ

բնակավայր

Firefox https://ebooks.bonee.net/books/tyhu/

Փոքր տարածքի պատկերը թղթի վրա՝ վերևից նայած, կոչվում է հատակագիծ:
Կազմի՛ր քո սենյակի «քարտեզը»՝ հատակագիծը



1սմ =1քայլ

ա) Նախ քայլերով չափի՛ր սենյակդ:
բ) Որոշի՛ր մասշտաբը, ասենք՝ քո մեկ քայլը հավասար է հատակագծում 2սմ-ի:
գ) Մասշտաբը պահպանելով՝ գծի՛ր սենյակի սահմանները, լավ կլինի՝ մատիտով, որ սխալվելու դեպքում կարողանաս ջնջել և ուղղել:
դ) Տե՛ս, թե ինչ կարևոր առարկաներ կան սենյակում, օրինակ՝ դուռ, լուսամուտ, կահույք, և ինչպես են դասավորված: Դրանք պատկերի՛ր այնպես, ասես վերևից ես նայում:
զ) Հետո տեղադրի՛ր ավելի փոքր առարկաները, օրինակ՝ սեղանի վրայի գրքերը, ծաղկամանը, հեռուստացույցը, սեղանի լամպը և այլն: Կարող ես դրանց համար պայմանական նշաններ հորինել:
է) Ներքևի անկյունում բացատրի՛ր քո օգտագործած պայմանական նշանները և նշի՛ր մասշտաբը:

6 von 98 12.02.2021, 09:28

Firefox https://ebooks.bonee.net/books/tyhu/

ԴԱՍ 3 ՏԵՂԱՆՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ, ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Եթե Երկրին տիեզերքից նայենք, չենք կարողանա հասկանալ, թե որն է վերևը, որը՝ ներքևը, որն է աջը, որը՝ ձախը: Ուրեմն ինչպե՞ս բացատրես, թե ինչը որտեղ է:

Դրա համար Երկրի պատկերները ծածկել են ուղղահայաց և հորիզոնական գծերի երևակայական մի ցանցով, որն ասես մասերի է բաժանում Երկրի մակերևույթը: Այդ գծերն անվանել են **միջօրեականներ** և **զուգահեռականներ**: Դրանց ծայրերին տառեր և թվեր են գրել, որոնք հեշտացնում են մեզ հետաքրքրող վայրը գտնելը:



1. Բաժանվե՛ք խմբերի և քարտեզի վրա կետագծով նշե՛ք Մանասի անցած ճանապարհը:



Ա նավահանգիստ
Բ մոտակա քաղաք
Գ հեռու գյուղ



Հին ամրոցի ավերակները

Մանաս անունով մի ճանապարհորդ է լինում: Նա իմանում է. որ ինչ-որ տեղ անապատում՝ մի հին ամրոցի ավերակներում, գանձ է թաքցրած: Որոշում է գտնել: Նավակով հասնում է նավահանգիստ և սկսում է հարցուփորձ անել, թե ինչպես հասնի ավերակներին, բայց ոչ ոք չէր էլ լսել հին ամրոցի մասին: Վերջապես հանդիպում է մի ծիավորի: Ձիավորը նրան կողմնացույց է տալիս և բացատրում ճանապարհը: Ասում է.

- Նախ պիտի ծովով 30 կիլոմետր դեպի արևմուտք գնաս, մինչև որ հասնես հանգրվանին:
- Նավակդ կթողնես հանգրվանում և մոտակա քաղաքից ավտոբուս կնստես:
- Ավտոբուսով կգնաս դեպի հյուսիս: Կհասնես մի գյուղի:

Այդտեղ ճանապարհը վերջանում է:

7 von 98 12.02.2021, 09:28

- Բայց դու շարունակիր անընդհատ հյուսիս գնալ, մինչև որ բլուրների հասնես:
- Բլուրների ստորոտում հովիվների կհանդիպես: Նրանցից ձի խնդրիր ու ձիով 40 կիլոմետր արևմուտք գնա:
- Այդտեղից, լեռնաշղթան շրջանցելով կթեքվես հարավ ու էլի 40 կիլոմետր կգնաս:
- Ամրոցի ավերակները մոտակայքում են:

Մանասն ամեն ինչ արեց այնպես, ինչպես ձիավորն էր ասել, բայց ամրոցը չէր երևում: Մութն ընկել էր: «Լույսը կբացվի, բարին՝ հետը», - մտածեց Մանասն ու պառկեց քնելու...

- **Փորձե՛ք Մանասին օգնել՝ նկարագրե՛ք, թե ինչպես պիտի առավոտյան շարունակի ճանապարհը, որ վերջապես հասնի ամրոցի ավերակներին ու գտնի գանձը:**
- **Օգտվելով քարտեզի ցանցի թվերից և տառերից՝ ասե՛ք ամրոցի ավերակների տեղը:**

Տնային առաջադրանք

Հետո, երբ տուն վերադարձավ, Մանասն օրագրում նկարագրեց իր ճամփորդությունը:

Ուշադիր նայի՛ր քարտեզին, կարդա՛ ձիավորի ցուցումները և փորձի՛ր լրացնել Մանասի պատմության մեջ բաց թողած բառերը:

Նախ նավահանգստից նավակով - - - կմ դեպի - - - լողացի: Մոտակա քաղաքից ավտոբուսով - - - կիլոմետր դեպի - - - գնացի, մինչև հասա գյուղին: Այդտեղ ճանապարհն ավարտվում էր: Արահետով քայլեցի - - - կմ: Հասա - - -, որոնց - - - հովիվների տեսա: Նրանցից - - - խնդրեցի և ձիով ևս - - - կմ գնացի դեպի - - -: Ինձանից - - - բարձր - - - էր: Շրջանցեցի ու ձիս քշեցի դեպի - - -: Այսպես մի - - - կիլոմետր էլ գնացի: Ոչ մի ամրոց չէր երևում, բայց արդեն ուշ էր: «Լույսը կգա, բարին՝ հետը», - մտածեցի, թիկնոցս վրաս գցեցի ու հենց այդտեղ էլ քնեցի: Երազումս երեխաների տեսա, որոնք ինձ բացատրեցին, թե ինչպես հասնեմ ամրոցին: Լուսաբացին շարունակեցի որոնումներս: Մի - - - կմ քայլեցի դեպի - - -, ապա ուղղությունս փոխեցի դեպի - - - և անապատով համարյա - - - կիլոմետր քայլելուց հետո հեռվում նկատեցի ամրոցի ավերակները:

ԴԱՍ 4 ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՂ ԱՆՑՅԱԼՈՒՄ

ՓՅՈՒՆԻԿԵՑԻՆԵՐ

Ավելի քան 4 հազար տարի առաջ Միջերկրական ծովի արևելյան ափին բնակվում էին **փյունիկեցիները**: Նրանք ստեղծել էին Հին աշխարհի ամենահզոր քաղաքակրթություններից մեկը, ուր զարգացած էին արհեստները, մշակույթը, առևտուրն ու ծովագնացությունը: Փյունիկեցիների ստեղծած այբուբենն առաջիններից մեկն է: Փյունիկեցի վարպետները շատ գնահատված էին: Հմուտ ոսկերիչների զարդեղենը, թափանցիկ և գունավոր ապակյա իրերը, փղոսկրե արձանիկները մեծ պահանջարկ ունեին հարևան երկրներում:



Փյունիկիայի Տիր քաղաքում խխունջներից թանկարժեք մուգ կապտակարմիր ներկանյութ էին ստանում՝ ծիրանին, որը հնում թագավորական գույն էր համարվում: Ներկը և դրանով ներկած կտորեղենը փյունիկեցիները վաճառում էին հարևան երկրներին:



Փյունիկեցիներն իրենց առևտրական նավերը հաճախ զարդարում էին ձիու գլխի փայտյա քանդակով, դրա համար էլ այդ նավերը կոչվում էին ծովաձիեր:

Փյունիկեցիները հռչակված էին նաև իրենց նավերով և հմուտ ծովագնացներ էին: Նրանց նավերը ոչ միայն դիմացկուն էին, այլև գեղեցիկ:

Նրանք ճանապարհորդում էին ծովով ու հասնում հեռավոր երկրներ: Հայտնի է, որ փյունիկյան նավատորմը, եգիպտական Նեխո փարավոնի պատվերով, մինչև անգամ շրջանցել է Աֆրիկա մայրցամաքը:



Բացի առևտրական նավերից, փյունիկեցիներն ունեին հզոր ռազմական նավատորմ: Հնգաշարք թիերով այս նավը կարծես լողացող ամրոց լիներ: Նավի անունը կիմանաք, եթե տեքստից դուրս գրեք համարակալած տառերը:

Հմուտ առևտրականներ լինելով՝ նրանք օտար երկրներում վաճառում էին իրենց արտադրանքը, հումք և անհրաժեշտ ապրանք էին բերում իրենց երկիր:

1. **Տեքստից դու՛րս գրեք, թե հարևան երկրներն ինչեր էին գնում փյունիկեցիներից:**

Տնային առաջադրանք

Սլաքից սկսելով՝ կարդա՛ գաղտնագիրը և նոր բան կիմանաս փյունիկեցիների քաղաքակրթության մասին:



Firefox https://ebooks.bonee.net/books/tyhu/

ԴԱՍ 5 ՀԻՆ ՀՈՒՅՆԵՐ

Մոտավորապես 3000 տարի առաջ Հունաստանում՝ Միջերկրական ծովի ափին ապրում էր մի ժողովուրդ, որն ամեն ինչից վեր էր դասում իր ազատությունն ու անկախությունը: Հունաստանում իշխանությունը պատկանում էր ոչ թե թագավորին, այլ ժողովրդին: Հունական ամենամեծ քաղաքներից մեկում՝ Աթենքում, բոլոր քաղաքացիները կարող էին մասնակցել ընտրություններին և դառնալ ղեկավար: Հունաստանում զարգացած էին ճարտարապետությունը, արվեստներն ու գիտությունը:



■ **Ի՞նչ եք հիշում Պյութագորասի, Արքիմեդի մասին:**

Գիտե՞ք, որ

Հին Հունաստանում Օլիմպիական խաղերի ժամանակ **դադարեցվել են պատերազմները**, և Օլիմպոս տանող ճանապարհները դարձել են անվտանգ:

393թ. Օլիմպիական խաղերին մասնակցել է նաև հայոց Վարազդատ Արշակունի թագավորը, որի մասին ասում են, թե «կորովի նետաձիգ էր, ճարտար գազանամարտիկ, սուսերամարտիկ, ըմբշամարտիկ և բռնցքամարտիկ»: Վարազդատի անունը արձանագրվել է մարմարյա սալիկին՝ որպես օլիմպիական չեմպիոն:

11 von 98 12.02.2021, 09:28

Հին հույն[4]երը գերազանց նավագնացներ էին և հզոր նավատորմ ունեին:

Ծովում նրանք փյունիկեցիների մրցակիցն էին:



Հին հույների ռազմական նավերը՝ **տրիերները** ունեին եռաշարք թիեր, ինչի շնորհիվ կարողանում էին հանկարծակի հարձակվել թշնամու նավերի վրա:

Հունաստանի մեծ մասը լեռնային էր, բերրի հողը՝ քիչ: Մարդիկ ստիպված լքում էին իրենց բնակավայրերն ու ավելի բերրի վայրեր փընտրում: Այսպես հույների ազ[5]դեցությունը տարածվում էր մինչև Փոքր Ասիա, Սև և Միջերկրական ծովի ափեր[6]ով մեկ:

Նոր ա[7]նհայտ վայրեր բացահայտելու, սխրա[8]նքներ գործելու ծարավը հույներին մղում էր հեռավոր ճամփորդությունների: Շատ դարեր առաջ հույն առաջին ծովագնա[9]ցները՝ արգոնավորդները, բացեցին էգեյան ծով[10]ից Սև ծով տանող ուղին: Այսօր այդ նույն հինավուրց ճանապարհով են նավարկում դեպի Հունաստանի ափերը:

Արգոնավորդները

Իոլկի արքայորդի Յասոնն ու իր խիզախ ընկերներն «Արգո» նավով ուղևորվում են դժվարին, արկածներով լի ճամփորդության:

Արգոնավորդները ճամփա են ընկնում [11]հեռավոր Կոլխիդա՝ ոսկե գեղմը բերելու: Կախարդուհի Մեդեայի օգնությամբ նրանց հաջողվում է քնեցնել մշտարթուն վիշապին ու հափշտակել գեղմը: Բազմաթիվ արկածնե[12]րից հետո հերոսները բարեհաջող հարազատ երկիր են վերա[13]դառնում:

Ոդիսևսի ճանապարհորդությունը

Ոդիսևսը՝ Իթակ[14]ի թագավորը, հայտնի էր իր խորամանկությամբ ու ճարպկությամբ: Այս պատմությունը Ոդիսևսի զարմանահրաշ արկածներով լի ճա[15]մփորդության մասին է:

Նավարկության ընթացքում հնարամիտ Ոդի[16]սևսը կարողանում է խաբելով փախչել միաչքանի հրեշից, կախարդներից ու հավերժահարսերից և տ[17]արբեր արկածներից հետո, վերա[18]դարնում է Իթակե, ուր նրան էին սպասում կին[19] ու որդին:

Տնային առաջադրանք

Տեքստում համարակալած տառերը հերթականությամբ տեղադրիր, կարդա՛ գաղտնագիրը և նոր բան կսովորես հին հույների մասին:

Հին հույն նշանավոր զորավար Ալեքսանդր ☐☐☐☐☐☐☐☐☐☐-ն նվաճեց Հունաստանից մինչև ☐☐☐☐☐☐☐☐☐ ընկած հսկայական տարածքը:

ԴԱՍ 6 ՀԻՆ ՀՌՈՄԵԱՅԻՆԵՐԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ

Մոտ 2000 տարի առաջ հռոմեացիները նվաճել էին Միջերկրականի առափնյա երկրները և Եվրոպայի մեծ մասը: Հռոմն այդ հզոր կայսրության մայրաքաղաքն էր: Այս հսկայական տարածքը կառավարելու, սահմանները պաշտպանելու, առևտուր անելու համար մարդիկ շարունակ ճամփորդում էին:

1. Ժամանակակից քարտեզի հետ համեմատելով՝ թվարկե՛ք այն երկրները, որոնք նախկինում հռոմեական կայսրության մաս են կազմել:

Ցամաքով ճանապարհորդելու համար հռոմեացիները **սալարկում էին ճանապարհները, քարե կամուրջներ էին կառուցում**: Բեռները տեղափոխվում էին սայլերով և ուղտերի քարավաններով: Գլխավոր ճանապարհներին հյուրանոցներ էին կառուցվում ճանապարհորդների համար:

Ծովային ճանապարհներով հարմար էր տեղափոխել ծանր բեռները: Հսկայական առևտրական նավերը նավարկում էին Միջերկրական ծովով, Եգիպտոսից և Հյուսիսային Աֆրիկայից ահռելի քանակությամբ հացահատիկ էին բերում, Հունաստանից՝ ձիթապտղի յուղ: Նավերով տեղափոխում էին փայտանյութ, քար, մետաղներ, նաև ձիեր ու վայրի գազաններ՝ դաժան գազանամարտերի համար: Այս ամենը, ինչպես նաև մետաքսը, համեմունքները, օծանելիքը բերվում էին ոչ միայն կայսրության հեռավոր ծայրերից, այլև Արաբիայից, Հնդկաստանից ու Չինաստանից:

Գիտե՞ք, որ...

Հռոմեական կայսրությունում գործում էին խիստ, բայց և արդար օրենքներ: **Նվաճված երկրների ժողովուրդները հռոմեացիներին հավասար իրավունքներ ունեին**: Նրանք էլ կարող էին Հռոմի քաղաքացի, մինչև իսկ կայսր դառնալ: Ժամանակակից շատ երկրների օրենսդրությունը հիմնված է Հին Հռոմի օրենքների վրա:

Գիտե՞ք, որ...

Հռոմեացիներն աչքի էին ընկնում իրենց շինարարական վարպետությամբ: Ողջ կայսրության տարածքում նրանք կառուցում էին ճանապարհներ, կամուրջներ, կոյուղու և ջրատար ցանցեր: Հռոմեական շատ կառույցներ պահպանվել են մինչև այսօր:

Ինչպես սագերը փրկեցին Հռոմը



Մի անգամ գիշերով Հռոմի թշնամիները գաղտագողի մոտենում են քաղաքին, որ հանկարծակիի բերեն քնած բնակչությանն ու գրավեն քաղաքը: Նրանք այնքան զգույշ են շարժվում, որ ոչ միայն պահակազորը, այլև շները չեն արթնանում: Բայց նրանց մոտենալն զգում են սագերը: Նրանց կռինչն ու թևերի աղմուկն արթնացնում են զինվորներին, որոնք նետերով ու քարերով կարողանում են հետ շպրտել թշնամուն:

Տնային առաջադրանք

Տարվա ամիսներից մի քանիսն անվանել են հռոմեական կայսրերի կամ աստվածների պատվին: Կռահի՛ր, թե որ ամիսն են կոչել.

- պատերազմի աստված **Մարսի**,
- նշանավոր զորավար և կայսր **Հուլիոս** Կեսարի,
- Օկտավիանոս **Օգոստոս** կայսրի **պատվին:**

ԴԱՍ 7 ՉԻՆԱՍՏԱՆ

1. Կարդացե՛ք տեքստը՝ կռահելով բաց թողած տառերը:

Չինաստանի քաղաքակրթությունն զարմանահրաշներից մեկն է: Մոտ 8 հազար տարի առաջ այնտեղ արդեն գյուղեր կային, որտեղ գյուղա□իները զբաղվում էին հ□ղագործությամբ և անասնապահությամբ: 5 հազար տարի առաջ նրանք գտել էին շերամի որդից **մետաքս** ստանալու եղանակը: 4 հազար տարի առաջ Չինաստանում արդեն քաղաքներ կային, ուր հմուտ արհեստավորները բարձրորակ կավե և մետա□յա իրեր էին պատրաստում:



Չինացիները շուրջ 3500 տարի առաջ ստեղծեցին սեփական գրերը: Նրանք առանձին տառերի փոխարեն **բառերն** ու **վանկերն** էին պատկերում: Այդպիսի գրերը կոչվում են **հիերոգլիֆներ**:

Չինական վանականները ճամփորդում էին Հնդկաստան՝ հին ձեռագրերին ծանոթանալու համար:



Գիտե՞ք, որ...

Ավելի քան 2000 տարի առաջ, հարձակումներից պաշտպանվելու համար չինացիները կառուցեցին **Չինական մեծ պարիսպը**: Այն մոտ 5000 կմ երկարություն ունի, և Երկրագնդի միակ կառույցն է, որ երևում է տիեզերքից:

Չինաստանի քաղաքներն ունեին լայն, լուսավոր փողոցներ՝ բազմաթիվ թեյարաններով, շուկաներով, ժամանցի վայրերով: Չինացիները **ծերանոցներ** և **մանկատներ** էին կառուցում անօթևանների համար:

Նրանք գյուղատնտեսության մեջ՝ կառուցել են **ոռոգման ցանցեր**, իմացել են՝ ինչպես **լավացնել** ընտանի կենդանիների և հացահատիկի տեսակները, ինչպես **պայքարել ցանքսերի վնասատուների դեմ**:

Չինացիներն առջինն են կատարել **պատվաստումներ ծաղիկ հիվանդության դեմ**: Նրանք տիրապետում էին կավից նուրբ ճենապակի պատրաստելու գաղտնիքին:

■ Հիշեք՝ է՞լ ինչ է մեզ հասել Չինաստանից:

Չինաստանի հիմնական առևտրական ուղիները գետերն էին, բայց նրանք նաև լավ ցամաքային ճանապարհներ էին կառուցում:

Չինաստանը մեծ հաջողություններ էր հասել նավաշինության մեջ: Նրանց նավերի ներսն անջրանցիկ պատերով բաժանված էր առանձին մասերի:

■ Մտածեք՝ ինչո՞վ է սա ավելի ապահով դարձնում նավը:

Միջին դարերում Եվրոպայում մեծ համբավ էին վայելում արևելքից բերվող **համեմունքները, օծանելիքը, զարդերը, մետաքսը**:

Չինաստան այցելած նշանավոր եվրոպացիներից էր իտալացի ճանապարհորդ **Մարկո Պոլոն**: Հետագայում նա Չինաստան կատարած ճամփորդության մասին գիրք գրեց, որից մարդիկ պատկերացում կազմեցին այդ հեռավոր երկրի հրաշալիքների մասին:

Չինացիներն օտարներին այ■քան էլ չէին սիրում, բայց գնալով մեծանում էր Առևտուրն արևմուտքի հետ: Ճենապակի արտադրող ֆաբրիկաները մինչև իսկ հարուստ եվրոպացիների համար հատուկ՝ նրանց զինանշանի պատկերով սպասքներ էին պատրաստ■մ:

Տնային առաջադրանք

Տեքստում բաց թողած տառերը տեղադրի՛ր համապատասխան գույնի վանդակներում և կարդա՛ ծածկագիրը:

Շուրջ 3000 տարի առաջ չինացիները հայտնագործել են

-ը:

ԴԱՍ 8 ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդստան թերակղզու հյուսիս-արևմուտքում՝ **Ինդոս** գետի հովտում, մոտ 4500 տարի առաջ ծնվեց հնդկական քաղաքակրթությունը:

Հետագայում մարդիկ տեղաշարժվելով՝ բնակեցրին **Հնդստան թերակղզու** նաև մյուս ջրառատ գետերի հովիտները:

Այստեղ շատ հնուց գիտեին մետաղներ մշակել և դրանցից զենք ու հողագործական գործիքներ պատրաստել:

Հնում Հնդկաստանը եվրոպացիներին պատկերանում էր իբրև հրաշքների ու անհամար հարստությունների երկիր: Թերակղզին մայրցամաքից բաժանված էր անանցանելի լեռնաշղթաներով, և ցամաքով Հնդկաստան կարելի էր հասնել միայն կիրճերով: Ու չնայած բազում դժվարություններին և խոչընդոտներին՝ եվրոպացի ճանապարհորդներն ու վաճառականները ձգտում էին ամեն կերպ հասնել Հնդկաստան:

Գիտե՞ք, որ...
Հայ-հնդկական կապեր գոյություն են ունեցել դեռևս շատ հին ժամանակներից: Հայ վաճառականների միջոցով էր կատարվում Հընդկաստանի առևտուրը Ռուսաստանի, Պարսկաստանի, Թուրքիայի և Վենետիկի հետ:



Գիտե՞ք, որ...
Թաջ Մահալ հրաշագեղ դամբարանը կառուցել է Շահ Ջահանը Ագրա քաղաքում՝ իր կնոջ՝ հայուհի Մումթազ Մահալի պատվին:



Որոշ համեմունքներ, որ մենք այսօր օգտագործում ենք, բերվել են Հնդկաստանից:

Հնդկաստանից բերում էին բամբակ, անուշահոտություններ, մարգարիտ, սուտակ, դեղորայք, ներկանյութեր և փղեր:

Չինաստանից ու Հնդկաստանից վաճառական-ճամփորդներն ապրանքը բարձում էին նավերը և ուղղվում դեպի **Պարսից ծոց** ու **Կարմիր ծով**, ապա ուղտերի քարավաններով թանկարժեք բեռը հասցնում էին Միջերկրական ծով ու կրկին նավերով՝ դեպի Եվրոպական երկրներ

Տնային առաջադրանք

■ **Ժամանակակից քարտեզի վրա գտի՛ր Հնդկաստանը և դուրս գրիր մի քանի խոշոր գետերի և քաղաքների անուններ:**

ԴԱՍ 9 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ

Միջին դարերում եվրոպացիները կարծում էին, թե Երկիրը տափակ է, և եթե հեռու լողաս՝ եզրից ցած կընկնես:

Այնինչ՝ ոչ եվրոպական ժողովուրդները դեռ շատ հնուց հեռավոր ծովային ճամփորդություններ էին կատարում: Օրինակ՝ Եվրոպայի հյուսիսում ապրող վիկինգներն իրենց նավերով նավարկել են մինչև Հյուսիսային Ամերիկայի ափերը:

15-րդ դարից եվրոպացիներն էլ սկսեցին ճամփորդել օվկիանոսներով և առևտրական կապեր հաստատել տարբեր երկրների և ժողովուրդների հետ: Այդ ժամանակ Եվրոպայից Արևելք տանող ցամաքային ճանապարհներն անվտանգ չէին, իսկ ծովային ճանապարհները, որ շրջանցում էին Աֆրիկան, չափազանց երկար էին ու տանջալից: Հարկավոր էր գտնել ավելի կարճ ու ապահով ճանապարհ:

Իտալացի ծովագնաց Քրիստափոր Կոլումբոսը Երկիրն ավելի փոքր էր պատկերացնում: Արդեն իմանալով, որ այն կլոր է, նա ենթադրեց, թե շարունակ դեպի արևմուտք լողալով հնարավոր է հակառակ կողմից հասնել Հնդկաստան:



■ Համեմատեք քարտեզները՝ ինչի՞ գոյության մասին չգիտեր Կոլումբոսը:

Կոլումբոսն իր երեք նավերով կտրեց-անցավ Ատլանտյան օվկիանոսը և հասավ անծանոթ ցամաքի: Նա վստահ էր, որ Հնդկաստան է հասել, և սկսեց հետազոտել ափը: Կոլումբոսը փնտրում էր Մարկո Պոլոյի նկարագրած՝ Արևելքի հեքիաթային հարստությունները, բայց գտավ միայն աղքատիկ խրճիթներում ապրող պարզամիտ բնիկների, որոնց «հնդկացիներ» անվանեց: Մինչդեռ, ինքն էլ չիմանալով, Կոլումբոսը հայտնագործել էր մի նոր մայրցամաք՝ Ամերիկան:

■ Կոլումբոսն Ամերիկայի բնիկներին ինչու՞ «հնդկացի» անվանեց:

1. **Կոլումբոսը ճանապարհորդության մեկնեց երեք նավերով: Վերծանի՛ր ծածկագիրը և կարդա՛ նավերի անունները:**



1. ☐☐☐☐☐
- հյուսիս 1
- հարավ 2
- հյուսիս 1
- հյուսիս-արևմուտք 1
- արևմուտք 2

2. ☐☐☐☐☐
- արևելք 2
- հարավ 2
- հյուսիս 1
- հարավ-արևելք 2
- արևմուտք 2

3. ☐☐☐☐☐ ☐☐☐☐☐
- հարավ-արևմուտք 2
- արևմուտք 2
- հյուսիս 1
- հարավ-արևելք 2
- արևմուտք 2
- արևելք 1
- արևմուտք 2
- հյուսիս 2
- հարավ 2
- արևմուտք 2

Նորագյուտ մայրցամաքը հետագայում մեկ այլ իտալացի ծովագնացի՝ Ամերիգո Վեսպուչիի անունով կոչվեց Ամերիկա, բայց Կոլումբոսը մինչև կյանքի վերջ հավատում էր, որ գտել է Հնդկաստան տանող նոր ճանապարհը:

Տնային առաջադրանք

Փորձի՛ր լրացուցիչ տեղեկություններ գտնել Ամերիգո Վեսպուչիի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

ԴԱՍ 10 ԱՖՐԻԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Գիտե՞ք, որ...
Մոտ 2600 տարի առաջ եգիպտական փարավոն Նեխոն նավեր սպառազինեց, որոնք ուղևորվեցին Կարմիր ծովից և շրջանցելով Աֆրիկան՝ հասան Միջերկրական ծով:
■ Կարո՞ղ եք հիշել՝ ու՞մ նավատորմն էր դա:

Աֆրիկա մայրցամաքը սկսել են հետազոտել դեռ շատ հնուց: Փյունիկեցի ծովագնաց **Հանոնը** երկարատև նավարկություն է կատարել Աֆրիկա մայրցամաքի արևմտյան ափով և հասել է մինչև Գվինեական ծոց: Այդ մասին վկայում են Կարթագեն քաղաքի տաճարներից մեկում թողած գրառումները:

Դեռևս 7-րդ դարում հայ մեծ մաթեմատիկոս, աշխարհագետ, աստղագետ և պատմաբան Անանիա Շիրակացին կազմել էր «Աշխարհացույցը»՝ աշխարհի քարտեզը, ուր մանրամասն նկարագրել էր Ասիան, Եվրոպան և Աֆրիկան:

12-րդ դարում արաբ ճանապարհորդ Իդրիսին աշխարհի քարտեզ գծեց, որտեղ Աֆրիկան շատ ավելի ճշգրիտ էր ներկայացված, քան մինչ այդ Եվրոպայում եղած քարտեզներում:

Արևելյան Աֆրիկայի մերձափնյա երկրներն աշխույժ առևտուր էին անում արտաքին աշխարհի հետ: Նրանց առևտրական նավերը մինչև անգամ Չինաստան էին հասնում:

Եվրոպացի ճանապարհորդների մեծ մասն ափամերձ տարածքներից այն կողմ չէին անցնում, և Աֆրիկայի կենտրոնական հատվածները

մնում էին անհայտ: Այդ պատճառով այն անվանում էին «**մութ մայրցամաք**»:

15-16-րդ դարերում եվրոպացիներն սկսեցին հետաքրքրվել Աֆրիկայով, քանի որ դեպի Հնդկաստան տանող ցամաքային ճանապարհները թուրքական տիրապետության պատճառով դարձել էին վտանգավոր:

Պորտուգալացի ծովագնաց **Բարտոլոմեու Դիաշը** դեպի Հնդկաստան նավարկության ժամանակ՝ Աֆրիկան շրջանցելիս, սարսափելի փոթորկի մեջ ընկավ և ափ դուրս եկավ Աֆրիկայի հարավային ծայրակետում, որը հետագայում անվանեցին **Բարեհուսո հրվանդան**: Դիաշի անցած ուղին շարունակեց և Հնդկաստան հասավ մեկ այլ պորտուգալացի հայտնի ծովագնաց՝ **Վասկո դա Գաման**:

18-րդ դարի վերջից, ձգտելով տիրանալ մայրցամաքի անհամար հարստություններին, Աֆրիկայի հետազոտությամբ սկսեցին զբաղվել անգլիացիները, ֆրանսիացիները և գերմանացիները:

1. Օգտվելով տեքստում ընդգծված անուններից և հարցերի պատասխաններից՝ լրացրե՛ք խաչբառը:

1. Աֆրիկայի արևմտյան ափի հետազոտման մասին ո՞ր հնագույն քաղաքում են գրառումներ գտել:
2. Պորտուգալացի ծովագնաց, որը շրջանցեց Բարեհուսո հրվանդանը և Հնդկական օվկիանոսով հասավ Հնդկաստան:
3. Արաբ աշխարհագետ, որի գծած քարտեզն ավելի ճշգրիտ էր, քան նույն ժամանակներում եվրոպացիներինը:
4. Հրվանդան, ուր հասավ 5-րդ կետի ծովագնացը:
5. Պորտուգալացի ծովագնաց, որն այդպես էլ Հնդկաստան չհասավ:
6. Հնում եվրոպացիներն ինչպիսի՞ն էին համարում Աֆրիկա մայրցամաքը:
7. Ովքե՞ր էին, որ իրենց նավատորմով փարավոնի հանձնարարությամբ շրջանցեցին Աֆրիկան:
8. Փյունիկեցի ծովագնաց, որ հասել է մինչև Գվինեական ծոց:



Տնային առաջադրանք

Կարդա՛ պատմությունը և հնարամիտ լուծում տուր:

Մի ճանապարհորդ վաճառական նավաբեկության արդյունքում ընկնում է անմարդաբնակ կղզի: Նրա կյանքը կախված էր միայն իր հնարամտությունից: Սկսեց շրջել և ուսումնասիրել կղզին: Պարզվեց, որ խմելու ջուր կար միայն կղզու կենտրոնում: Սակայն մի մեծ փոս բաժանում էր նրան աղբյուրից: Փոսի լայնությունը բոլոր կողմերից 2մ էր: Վրայով թռչել չէր կարող: Վաճառականն ինչպե՞ս անցներ փոսը, եթե ձեռքի տակ ուներ ընդամենը երկու փայտի կտոր, որոնց երկարությունը հենց 2 մ էր:





ԴԱՍ 11 ՇՈՒՐՋԵՐԿՐՅԱ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ

Ծովագնացները հին ժամանակներից շարունակ նավարկում էին օվկիանոսներով, բայց հետազոտելու դեռ շատ բան կար:

Առաջին **շուրջերկրյա ճանապարհորդությունը** կատարեց պորտուգալացի ծովագնաց Ֆերնան Մագելանը՝ 1519-1522 թվականներին:

- **Հիշու՞մ եք՝ ո՞ր օվկիանոսին է նա անուն տվել, ինչպե՞ս է այն անվանել և ինչու՞:**

Մագելանը կտրեց-անցավ Ատլանտյան օվկիանոսը, շրջանցեց Հարավային Ամերիկան, կտրելով Խաղաղ օվկիանոսը՝ հասավ ինչ-որ անհայտ, հարուստ ու գեղեցիկ կղզիներ, որոնք անվանեց Ֆիլիպինյան կղզիներ: Այստեղ Մագելանը սպանվեց բնիկների կողմից: Նրա նավատորմի հինգ նավերից միայն մեկին՝ «Վիկտորիային» հաջողվեց մեկնելուց երեք տարի անց հասնել հայրենիք:

Մագելանի հայտնաբերած նեղուցը, որ Հարավային Ամերիկան բաժանում է Հրո երկիր կղզուց, կոչվեց Մագելանի անունով:

- Աշխարհի քարտեզի վրա ցու՛յց տուր **Մագելանի նեղուցը**:



Այն ժամանակներում շատերը կարծում էին, թե Խաղաղ կամ Հնդկական օվկիանոսի հարավում պետք է, որ մի մեծ մայրցամաք լինի:

Հոլանդացի ծովագնացները մի քանի անգամ հասել էին **Ավստրալիայի** ափերը, բայց նրանց մտքով էլ չէր անցել, որ դա հենց իրենց

փնտրած մայրցամաքն է. նրանք համոզված էին, որ նոր մայրցամաքում պետք է անթիվ-անհամար հարստություններ լինեին:

■ Ի՞նչ կարող եք հիշել Ավստրալիայի մասին:

Հոլանդացի ականավոր ծովագնաց **Աբել Թասմանը 1642-1644** թվականներին կատարեց մի նավարկություն, որի ժամանակ հայտնաբերեց Նոր Զելանդիան, մի շարք այլ կղզիներ, որոնցից մեկը հետագայում իր պատվին անվանեցին **Թասմանիա**:

■ Քարտեզի վրա գտե՛ք Թասմանիա կղզին և Նոր Զելանդիան:

Ավստրալիան հոլանդացիներին չհետաքրքրեց: Նրանք դեռևս հավատում էին, որ հարավում կա մեկ այլ՝ անհայտ մայրցամաք: Այսուհետև եվրոպացիներն Ավստրալիա ոտք էին դնում դեպքից դեպք, հիմնականում փոթորիկների ժամանակ:

Թասմանից մոտ 100 տարի անց անգլիացի նշանավոր ծովագնաց **Ջեյմս Կուկը** երեք մեծ նավարկություն կատարեց, որոնց ընթացքում եղավ Թահիթի կղզում, հիմնովին հետազոտեց Նոր Զելանդիան և քարտեզագրեց Ավստրալիայի արևելյան ափը:

Գիտե՞ք, որ...
Տեսնելով, թե ինչ խեղճ են ապրում Նոր Զելանդիայի բնիկները՝ **մաորիները**, և թե ինչ հյութեղ արոտավայրեր ունի կղզին, Կուկն Անգլիայից իր անձնական միջոցներով ոչխարներ գնեց և բերեց Նոր Զելանդիա:

Ծովագնացությունը միշտ էլ վտանգավոր է եղել: Փոթորիկներից ու նավաբեկություններից բացի, մեծ վտանգ էին ներկայացնում **ծովահենները**, որոնք հարձակվում ու թալանում էին նավերը:

1. «Ծովամարտ» խաղանք.



1 Բաժանվե՛ք զույգերի:

2 Նկարի օրինակով յուրաքանչյուրդ երկու «մարտադաշտ» նկարեք. առաջինը ձերն է, երկրորդը՝ հակառակորդինը: Նշե՛ք տառերը և թվերը:

3 Ձեր դաշտում տեղադրե՛ք ձեր նավատորմը. 10 նավ, որոնցից մեկը՝ չորս վանդականի, երկուսը՝ երեք վանդականի, երեքը՝ երկու վանդականի և չորսը՝ մեկ վանդականի: Հակառակորդի դաշտը դատարկ թողեք:

4 Նավերը կարող են թե՛ հորիզոնական, թե՛ ուղղահայաց դրվել, բայց պետք է միմյանցից առնվազն մեկ վանդակ հեռու լինեն:

5 Ձեր «մարտադաշտն» ընկերը չպիտի տեսնի:

6 Սկսում եք մարտը՝ «կրակելով» թշնամու նավերին: Դրա համար ասում եք այն վանդակի տառն ու թիվը, ուր, ըստ ձեզ, կարող է գտնվել նրա նավերից մեկը:

7 Եթե դիպել եք հակառակորդի նավին, ապա հակառակորդի «դաշտի» համապատասխան վանդակում խաչ դրեք: Եթե նավը մեկ վանդականի է, հակառակորդը պետք է ասի, որ նավը «սպանվել» է: Եթե ավելի մեծ նավ է, ասում է՝ «վիրավորվել է»:

8 Եթե «վրիպել» եք, կետով նշեք վանդակը, որ երկրորդ անգամ «չվրիպեք»: «Կրակելու» հերթն անցնում է հակառակորդին:

Հաղթում է նա, ով առաջինն է «սպանում» հակառակորդի բոլոր նավերը:

Տնային առաջադրանք

Ծովամարտ խաղի կանոնները բացատրի՛ր ընտանիքիդ անդամներից մեկին կամ ընկերոջդ, և միասին խաղացե՛ք:

Firefox https://ebooks.bonee.net/books/tyhu/

ԴԱՍ 12 ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ի՞նչ են տվել ճանապարհորդությունները ու հայտնագործությունները աշխարհին: Ի՞նչն է մղել անվեհեր մարդկանց՝ նետվելու անհայտության ու անհամար վտանգների գիրկը: Նրանցից շատերը չէին էլ պատկերացնի, որ իրենց կատարած ճամփորդությունները կարող էին այդքան փոխել աշխարհը:

Զարմանահրաշ երկրներ, հրաշքներ տեսնելու, դրանց մասին առաջինը պատմելու, արժեքավոր և հազվագյուտ իրեր բերելու ցանկությունը շատերին է վարակել:

Ինչպես որ բազմազան է Երկիր մոլորակի բնությունը, նույնքան բազմազան են այն բնակեցնող մարդիկ՝ սովորույթներով, մտածելակերպով, իմաստնությամբ: Առանց միմյանց հետ շփվելու և միմյանցից սովորելու մարդիկ շատ բան կկորցնեին: Խիզախ ու հետաքրքրասեր ճանապարհորդների շնորհիվ դրանք մեր ընդհանուր հարստությունն են դարձել:

1. Գտե՛ք նախադասությունների համապատասխան կեսերը, և նոր հետաքրքիր բացահայտումներ կանեք:

- Եվրոպայի հյուսիսում ապրող **վիկինգներն** իրենց «**դրակար**» կոչվող նավերով հայտնագործել են
- և բնակեցնել Խաղաղ օվկիանոսի կենտրոնական և հարավային մասերում ցրված **Պոլինեզյան կղզիները:**
- Չինաստանից քարավանները դարեր շարունակ նրբագույն մետաքս և այլ արժեքավոր իրեր էին բերում
- Մոտ 2500 տարի առաջ մեծ զորավար **Ալեքսանդր Մակեդոնացին** նվաճեց Պարսկաստանը, Եգիպտոսը և հասավ
- Գրենլանդիա կղզին և Կոլումբոսից 5 դար առաջ հասել են Հյուսիսային Ամերիկա:
- Հնդկաստան, ինչի շնորհիվ հունական մշակույթը տարածվեց աշխարհով:
- 3000 տարի առաջ Ավստրալիայից հյուսիս գտնվող կղզիների բնիկները սկսեցին իրենց նավակներով՝ **կանոեներով** նավարկել արևելք
- դեպի արևմուտք՝ 5 հազար կիլոմետր ձգվող ցամաքային առևտրական ուղիով, որը կոչվում էր **Մետաքսի մեծ ճանապարհ:**

29 von 98 12.02.2021, 09:28

2. Բավիղում գտեք, թե ինչը որտեղից է հասել մեր սեղանին:



3. Կռահե՛ք, թե որ բառը որ լեզվից ենք փոխառել

իտալերեն	նոտա, բուլկի, մատիտ, տրամվայ,
ֆրանսերեն	գաթա մանուշակ,
անգլերեն	մեքենա,
հունարեն	նարինջ, բորշչ, պանդոկ, դարչին,
պարսկերեն	փարոս, շատրվան մկրատ
վրացերեն	ռադիո պարոն, ատլետ,
ռուսերեն	կեֆիր օպերա ճատրակ,
հնդկերեն	կիրակի նամակ

Գիտե՞ք, որ...
Վրացիները օջախ, դրոշ, մածուն և ճշմարիտ բառերը վերցրել են հայերենից:
Իսկ լավաշին բոլոր լեզուներով լավաշ են ասում:

4. Փորձե՛ք կռահել:

1 Այս թռչունը երբեք Հնդկաստանում չի եղել
- **Ո՞ր ճանապարհորդի սխալի պատճառով է իր անունն ստացել:**
- **Ո՞րն է նրա հայրենիքը:**

2 Ռուսերեն դեղձին ասում են «պերսիկ»:
- **Ի՞նչ եք կարծում, ո՞ր երկրից է դեղձը Ռուսաստան հասել:**

3 Առանց այդ չինական հայտնագործության նավարկելը դժվար կլիներ:
- **Ի՞նչն է դա:**

4 Հունարեն «տետրա» նշանակում է չորս: Հույների՝ չորս տակ ծալած թուղթը հայերենում դարձել է այն, ինչից բոլորիդ պայուսակում կա:
- **Ի՞նչ է դա:**

5 Գորգին անգլերեն «քարփեթ» են ասում:
- **Ձեր կարծիքով նրանք այս բառը ո՞ր լեզվից են փոխառել:**

Տնային առաջադրանք

Գտի՛ր սխալը.
Հույն մեծ զորավար Ալեքսանդր Մակեդոնացին սիրում էր առավոտյան նախաճաշին լոլիկով ձվածեղ ուտել:

ԴԱՍ 13 ԱՆՏԱՐԿՏԻԴԱՅԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ

Արդեն 16-րդ դարում շատերն էին ենթադրում, որ երկրագնդի հարավային մասում պետք է մայրցամաք լինի, բայց դեռևս ոչ ոք այդքան հեռու չէր նավարկել: 18-րդ դարում ֆրանսիացի ճանապարհորդներն Ատլանտյան օվկիանոսով դեպի հարավ նավարկելով՝ մի քանի մեծ ու փոքր կղզիներ հայտնաբերեցին, բայց մինչև մայրցամաք չհասան:

Գրեթե նույն ժամանակ՝ Նոր Զելանդիայի հայտնաբերումից հետո, Ջեյմս Կուկը նավարկեց այս ենթադրյալ մայրցամաքը գտնելու, բայց օվկիանոսի սառույցներն անհնար դարձրեցին ցամաք հասնելը:

1820 թվականին միայն ռուս ճանապարհորդներ Բելինգսհաուզենին և Լազարևին հաջողվեց հայտնաբերել Անտարկտիդա մայրցամաքը:

Անտարկտիդայի ափերը հետազոտելուց հետո ճանապարհորդների նպատակն էր հասնել հարավային բևեռին: Շատ հետազոտողներ փորձեցին կտրել-անցնել ձյուներն ու սառցալեռները, սակայն առաջինը դա հաջողվեց նորվեգացի ճանապարհորդ Ամունդսենին, որը հարավային բևեռ հասավ 1911թվականին:

■ Ի՞նչ եք հիշում Անտարկտիդայի մասին:

1. Կարո՞ղ ես նկարում առնվազն 10 սխալ գտնել:

Անտարկտիդայի զարմանալի բնակիչները

Անտարկտիդայի ամենազարմանալի բնակիչները պինգվիններն են՝ սպիտակ կրծքով ու սև մարմնով, փոքր գլխով, կարճ թևերով հաստամարմին թռչունները, որ թռչել չգիտեն: Փոխարենը նրանք վարպետ լողորդներ են: Իրենց փոքրիկ թիականման թևերով կարողանում են ջրում շատ արագ շարժվել և ճարպկորեն ձկներ ու ծովային այլ մանր կենդանիներ որսալ, որոնցով սնվում են: Պինգվինների մարմինը ծածկված է փոքրիկ, բայց խիտ փետուրներով, իսկ մաշկի տակի հաստ ճարպային շերտը թույլ չի տալիս, որ մրսեն:

Պինգվինները բնակվում են մեծ խմբերով՝ **գաղութներով** և, ինչպես վայել է թռչուններին, ձու են ածում ու թուխս նստում, բայց ոչ՝ ինչպես այլ թռչունները. նրանք ձուն պահում են ոտքերի վրա, իսկ իրենք կռանում են, որ փորով ծածկեն ու տաքացնեն այն: Հետաքրքիրն այն է, որ թե՛ հայր, թե՛ մայր պինգվինները կարող են թուխս նստել, իսկ հետո էլ ձագուկին երկուսով կերակրել:

Պինգվին-ճուտիկների մարմինը ծածկված է լինում մուգ մոխրագույն աղվամազով:

Գիտե՞ք՝ պինգվիններն էլ **«մանկապարտեզներ»** ունեն, ուր թողնում են իրենց ձագուկներին, քանի դեռ հայրիկն ու մայրիկը «աշխատանքի» են գնում՝ կեր հայթայթելու:

2. Ինչո՞վ են նման թռչունները: Ինչո՞վ են տարբեր:



Գիտե՞ք, որ...

Ամենամեծ պինգվինը **կայսերական պինգվինն** է: Նրա հասակը հասնում է 120 սմ-ի: Ամենափոքրը Նոր Զելանդիայում բնակվող **փոքր կապույտ պինգվինն** է՝ ընդամենը 40 սմ:

Տնային առաջադրանք

Ո՞ր կայանը ո՞ր երկրին է պատկանում: Բավիղով առաջնորդելով՝ բևեռախույզներին օգնի՛ր հասնել իրենց կայանները:



■ Ո՞ր երկրի դրոշն է:

....

ԴԱՍ 14 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԻԵԶԵՐՔՈՒՄ ԵՎ ՕՎԿԻԱՆՈՍՈՒՄ

ԻՆՉՊԵՍ ԹՌՉՈՒՆԸ...

Դեդալոս և Իկարոս

Հունական առասպելը պատմում է, որ Կրետե կղզու թագավոր Մինոսը բանտարկել էր գյուտարար Դեդալոսին ու նրա որդուն՝ Իկարոսին: Բանտից փախչելու միակ ճանապարհը լուսամուտն էր, իսկ բանտի աշտարակը շատ էր բարձր: Բայց հնարամիտ Դեդալոսը մոմից թևեր է պատրաստում իր և որդու համար, ու նրանք դուրս են թռչում: Իկարոսն, ազատությունից արբած՝ մեծամտանում է և որոշում Արևին հասնել: Արևն իր շողերով հալեցնում է մոմե թևերը, և հանդուգն Իկարոսը գահավիժում է փոթորկած ծովն ու խեղդվում:

Չնայած այս տխուր պատմությանը, մարդիկ միշտ երազել են թռչելու մասին:



Դեռևս 15-րդ դարում իտալացի հանճարեղ նկարիչ, ճարտարապետ ու գյուտարար **Լեոնարդո դա Վինչին թռչող սարք** նախագծեց:



Հետո արդեն 18-րդ դարում ֆրանսիացի Մոնգոլֆիե եղբայրները ստեղծեցին **օդապարիկը**՝ տաք օդով լցված հսկայական փուչիկը, որով առաջին անգամ, 1783 թվականին, մարդն օդ բարձրացավ:



1903 թվականին ամերիկացի Ռայթ եղբայրները նախագծեցին և փորձարկեցին առաջին **ինքնաթիռը**: Բայց այն կարողանում էր թռչել ընդամենը 10 րոպե, ժամում 64 կմ արագությամբ…



1930 թվականին մեր հայրենակից **Արտեմ Միկոյանը** նախագծեց ՄիԳ ռազմական կործանիչ ինքնաթիռը, որ թշնամիների ահն ու սարսափը դարձավ:

Այսօր մարդիկ տիեզերանավերով արդեն ակոսում են տիեզերքը, և ո՞վ իմանա, միգուցե մի գեղեցիկ օր հնարավոր դառնան ճամփորդությունները դեպի անծայրածիր տիեզերքի հեռավոր անկյուններ:

1961 թվականի ապրիլի 12-ին մարդն առաջին անգամ ճեղքեց երկրի մթնոլորտն ու տիեզերք դուրս եկավ: Այդ մարդը ռուս տիեզերագնաց **Յուրի Գագարինն** էր: Ի հիշատակ այս նշանակալից իրադարձության, ամեն տարի **ապրիլի 12-ը** ամբողջ աշխարհում նշվում է որպես **տիեզերագնացության օր**:

ԻՆՉՊԵՍ ՁՈՒԿԸ...

Մարդիկ անհիշելի ժամանակներից ոչ միայն թռչունների պես թռչել, այլև ձկների պես լողալ են երազել: Նրանք հեքիաթներ են պատմել ծովի խորքում բնակվող երևակայական արարածների, նրանց հարստությունների մասին: Իսկ իրական կյանքում մարդիկ ջանք չեն խնայել, որ հետազոտեն օվկիանոսի հատակը, բացահայտեն նրա գաղտնիքները և նվաճեն անսահման հարստությունները:



1770-ին ամերիկացի Բուշնելը կառուցեց **առաջին սուզանավը** և այն «Կրիա» անվանեց:

1800-ին մեկ այլ ամերիկացի՝ Ռոբերտ Ֆուլտոնը, կառուցեց պղնձապատ իրանով սուզանավ, որն անվանեց «Նաուտիլուս»:



Այսօր հզոր ժամանակակից սուզանավերով մարդիկ հետազոտում են օվկիանոսի խորքերը և փորձում են վերծանել ջրաշխարհի անհամար գաղտնիքները:

1943 թվականին ֆրանսիացի ծովային և հետազոտող **Ժակ Իվ Կուստոն** ստեղծեց **«ակվալանգը»**, որ նշանակում է «ջրային թոքեր»: Ակվալանգով մարդիկ կարող էին ջրի տակ շնչել և մի քանի ժամ շարունակ սուզված հետազոտել ծովի խորքերը:

Նորվեգացի նշանավոր գիտնական Տուր Հեյերդալը մի քանի անսովոր նավարկություն կատարեց հնագույն ժողովուրդների նավերի կրկնօրինակներով՝ փորձելով կրկնել նրանց ծովային անհավանական թվացող ճամփորդությունները:

Հեյերդալը պոլինեզացիների «Կոն-Տիկի» լաստանավով կտրեց Խաղաղ օվկիանոսը, եգիպտացիների պապիրուսե «Ռա» նավով՝ Ատլանտյան օվկիանոսը, շումերների եղեգնյա «Տիգրիսով» նավարկեց Հնդկական օվկիանոսով:

Միջնադարյան Կիլիկիայի հայկական թագավորության նավերի օրինակով պատրաստված «Կիլիկիան» 2006թ. նավարկեց Ատլանտյան օվկիանոսով և կտրեց-անցավ Սև, Միջերկրական, Հյուսիսային ու Բալթիկ ծովերը: Վրաստանի Բաթումի նավահանգստից նավը բերվեց Հայաստան և խարիսխ գցեց Սևանա լճում:

1. **Խմբավորե՛ք փոխադրամիջոցները, որոնցով մարդիկ ճամփորդել են հնուց մինչև օրս:**

ցամաքային	ջրային	օդային

Տնային առաջադրանք

Կարո՞ղ ես հիշել, թե հեքիաթային հերոսներից ով ինչով էր ճամփորդում:

Քաջ Նազար

Բաբա Յագա

Ալադին

թռչող գորգ

դդմակառք

դելֆիններ

Մոխրոտիկ

վառարան

Փոքրիկ Մուք

վագր

Եմելյա



եղջերուներով սահնակ

Ձմեռ պապ

ցախավել

Արիել

արագընթաց կոշիկներ

Ճանապարհորդ գորտը

սագեր



ԹԵՄԱ 5
ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

ԴԱՍ 1 ՄԻԱԿՆ ՈՒ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻՆ

- Ամենից շատ ու՞մ եք սիրում:
- Ինչպե՞ս եք ցույց տալիս, որ սիրում եք:
- Երբ մայրիկը, հայրիկը հոգնած են, ինչպե՞ս եք հոգ տանում նրանց մասին:
- Մայրիկի, հայրիկի սերը ձեր հանդեպ ինչի՞ց է երևում:

ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆԸ

Անտուան դը Սենտ Էկզյուպերի

(հատված)

Երկար քայլեց Փոքրիկ իշխանը ավազների, ժայռերի ու ձյան միջով, մինչև որ դուրս եկավ մի ճանապարհ:

Նրա առաջ վարդերի պարտեզ էր: Փոքրիկ իշխանը տեսավ, որ դրանք բոլորն էլ նման են իր Վարդին:

- Ովքե՞ր եք, - զարմանքից քար կտրած հարցրեց նա և իրեն շատ, շա՜տ դժբախտ զգաց: Նրա գեղեցկուհին ասում էր, որ իր նմանն ամբողջ տիեզերքում չկա: Ու ահա՝ մի այգում ճիշտ և ճիշտ իր ծաղկի նման հինգ հազար ծաղիկ: «Ես կարծում էի, թե աշխարհում միակ ծաղկի տերն եմ, որի նմանը ոչ ոք չունի, այնինչ դա ամենասովորական մի ծաղիկ է եղել, մի հասարակ վարդ»:

Նա պառկեց խոտերի վրա ու լաց եղավ:

Հենց այստեղ էլ հայտնվեց աղվեսը:

- Մի քիչ խաղա՛ ինձ հետ, - խնդրեց Փոքրիկ իշխանը:
- Չե՛մ կարող, - պատասխանեց աղվեսը, - ես ընտելացված չեմ:
- Իսկ ինչպե՞ս են ընտելացնում, - հարցրեց Փոքրիկ իշխանը:
- Դա վաղուց մոռացված մի բան է, - բացատրեց աղվեսը, - դա նշանակում է կապվել մեկի հետ...
- Կապվե՞լ...
- Հենց բանն էլ այդ է, - ասաց աղվեսը: - Հիմա դու ինձ համար ընդամենը մի փոքրիկ տղա ես, ինչպես մյուս հարյուրհազարավոր տղաները: Դու ինձ պետք չես, ես էլ քեզ պետք չեմ: Բայց եթե ինձ

ընտելացնես, ես քեզ համար ամբողջ աշխարհում միակը կդառնամ, դու էլ ինձ համար ամբողջ աշխարհում միակը կդառնաս:

- Հասկացա..., - ասաց Փոքրիկ իշխանը, - մի վարդ կար... երևի ինձ ընտելացրել էր...

Հաջորդ օրը Փոքրիկ իշխանը նորից եկավ վարդերի մոտ:

- Դուք բոլորովին նման չեք իմ վարդին, - ասաց նա, - իհարկե, թե պատահական անցորդն իմ վարդին նայի՝ կասի, որ նա էլ ճիշտ ձեզ նման է: Բայց ինձ համար նա մենակ ավելի թանկ է, քան դուք՝ բոլորդ միասին: Չէ՞ որ նրա՛ն, և ոչ թե ձեզ էի ես ամեն օր ջրում: Նրա՛ն, և ոչ թե ձեզ էի քամուց պաշտպանում: Ես լսում էի նրան, երբ տրտնջում էր, լսում էի, երբ պարծենում էր: Ես լսում էի նրան նույնիսկ այն ժամանակ, երբ նա լռում էր: Նա ի՛մն է:

Վարդերը շատ շփոթվեցին:

Փոքրիկ իշխանը վերադարձավ աղվեսի մոտ:

- Հիմա հասկացա՞ր, որ գլխավորը աչքով չես տեսնի: Սրատեսը սիրտն է:

- Գլխավորը աչքով չես տեսնի,- կրկնեց Փոքրիկ իշխանը, որ լավ հիշի:

- Քո վարդը քեզ թանկ է, որովհետև դու նրան քո հոգին ես տվել:

- Իմ հոգին եմ տվել ... ,- կրկնեց Փոքրիկ իշխանը, որ լավ հիշի:

- Մի մոռացիր, - ասաց աղվեսը, - որ քանի կաս, պատասխանատու ես քո վարդի համար:

- Ես իմ վարդի համար պատասխանատու եմ ..., - կրկնեց Փոքրիկ իշ-խանը, որ լավ հիշի:

- Թեև աշխարհում վարդեր շատ կան, Փոքրիկ իշխանի համար իր վարդն ամենաթանկն էր: Ինչու՞:
- Կա՞ն բաներ, որ անփոխարինելի են ձեզ համար ի՞նչը, ո՞վ, ինչու՞:

1. Ընկերների հետ նախադասություններ գրե՛ք՝ ինչու՞ եք սիրում Հայաստանը, և նկարազարդեք:

Նկարները փակցրե՛ք դասարանի պատին և Հայաստանը ներկայացնող ցուցահանդեսի սկի՛զբ դրեք:

ԴԱՍ 2 ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ԵՐԿԻՐ

Կա աշխարհում բանձրիկ մի Հայաստան աշխարհ,
Որն իր **լաջվարդ, լազուր** լեռներն ունի
Եվ իր դաշտերն ունի՝ որպես **ճշխար**:
Երկիրն այս հին է, նաև՝ լեռնապատ, առասպելապատ,
Առասպելներ, որ իրար պահող են
Եվ **իրարամերժ**:
Կա աշխարհում բանձրիկ մի Հայաստան աշխարհ
Ու կլինի հավերժ:

Ռազմիկ Դավոյան

- Ինչպիսի՞ երկիր է Հայաստանը:
- Ի՞նչ է առասպելը, ի՞նչ կարող է մեզ սովորեցնել:

• ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԸ

Հայկը **վայելչակազմ**, թիկնեղ, գանգուր մազերով և վառվռուն աչքերով հսկա էր: Չկամենալով ենթարկվել Բելին, որը բռնանալով գրավել էր շատ երկրներ, իր որդիների և դուստրերի հետ հեռանում է Բաբելոնից ու բնակություն հաստատում մի բարձրավանդակ դաշտում: Այս բանը չհանդուրժելով՝ Բելը զորքով գալիս է Հայկին հնազանդեցնելու: Հայկը քաշում է իր **լայնալիճ** աղեղը և երեքթևյան նետով տապալում Բելին: Մեր աշխարհը նախահայր Հայկի անունով կոչվում է Հայք, իսկ մենք՝ հայեր:

- Ինչու՞ ենք Հայկին «նախահայր» կամ «նահապետ» անվանում :

• ՎԱՀԱԳՆ

Վահագնը հնում մեր ռազմի աստվածն է համարվել: Վիշապներին հաղթելու համար Վիշապաքաղ անունն է ստացել:
Մի տարի Հայոց աշխարհում ձմեռը երկար տևեց, անասունների կերն սպառվել էր, և ժողովուրդը հուսահատության մեջ էր: Վահագնին դիմեցին, որ օգնի իրենց: Ասորեստանի Նինվե քաղաքի պարիսպներից ներս հարդի հսկայական դեզեր կային: Վահագնը

հարդի պարկերը նետեց ձիու **գավակին** ու ձին **խթանեց**: Ասորիների նահապետ Բարշամն ընկավ Վահագնի հետևից, բայց նրա սուրը կարողացավ միայն հարդով լի պարկի ծայրը թռցնել: Վահագնը, այս բանը չնկատելով, շարունակում էր սլանալ երկնքով, իսկ հարդը թափվում էր պարկից, դառնում բոցավառ աստղիկներ: Այսպես երկնակամարում առաջացավ մի լուսեղեն ուղի, որը կոչեցին «Հարդագողի ճանապարհ»:

■ Հիշու՞մ եք՝ Հարդագողի ճանապարհն է՞լ ինչ անուն ունի:

• ԱՍՏՂԻԿ

Վահագնի կինը սիրո, մաքրության և ջրի աստվածուհի գեղեցկուհի Աստղիկն էր: Ամեն առավոտ արևածագից առաջ Աստղիկն իջնում էր գետում լողանալու: Նրա գեղեցկությամբ **թովված**՝ պատանիները գալիս, թաքնվում էին թփուտներում, որ Աստղիկին տեսնեն: Բայց **միգանույշները**, իմանալով այս մասին, իջնում էին բարձունքներից, շրջապատում նրան, մշուշով լցնում չորսբոլորն ու անտես դարձնում անհամեստ հայացքներից: Ասում են՝ հենց մշուշ բառից էլ ծագել են Մշո դաշտեր, Մուշ անվանումները: Աստղիկին էր նվիրված Վարդավառ տոնը, երբ աստվածուհու պատվին մարդիկ միմյանց վրա ջուր էին լցնում ու վարդեր նվիրաբերում նրան:

■ Ո՞ր ծաղիկն էր գեղեցկության աստվածուհու խորհրդանիշը:



• ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ՇԱՄԻՐԱՄ

Ասորեստանի թագուհի Շամիրամը, լսելով Հայոց թագավոր Արայի գեղեցկության մասին, փորձում է նվերներով և խոստումներով հրապուրել նրան: Երբ Արան մերժում է, նա հավաքում է ահռելի զորքն ու հարձակվում Հայոց երկրի վրա: Կռվի ժամանակ Արան սպանվում է: Շամիրամը, հայերի վրեժից

վախենալով, լուր է տարածում, թե իր աստվածներն, Արայի վերքերը լիզելով, կենդանացրել են նրան: Ասում են՝ Արայի վրա լալով Շամիրամը քար դարձավ: Այսօր Հայաստանում դեմ դիմաց կանգնած են երկու լեռ՝ Արայի և Շամիրամի լեռները: Վայրն, ուր Արան ընկավ, նրա անունով կոչվում է Այրարատ:

- Արայի անունով ո՞ր դաշտն է կոչվում:

• ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԼԵԳԵՆԴԸ

Ասում են՝ Սևանա լճի տեղում մի ժամանակ ցամաք էր: Գյուղին մոտիկ, մի բլրի տակ, առատ աղբյուր կար, որից ջուր վերցնելիս գյուղացիները հանում էին ակունքը փակող ահագին քարը, իսկ հետո նորից զգուշությամբ տեղը դնում:

Մի օր հարսներից մեկը գնում է աղբյուր՝ ջուր վերցնելու ու մոռանում է փակել ակունքը: Ջուրը դուրս է հորդում և հեղեղում չորսբոլորը: Բնակիչները սարսափահար փախչում են՝ ասելով. «Քա՛ր դառնաս, ով բաց է թողել ակունքը»: Մոռացկոտ հարսը քար է դառնում, իսկ ջուրը, անընդհատ հոսելով, դառնում է Սևանա լիճը, որից վեր է բարձրանում քարացած հարսի գլուխը՝ Հարսնաքարը:

- Ուրիշ ի՞նչ առասպելներ և լեգենդներ գիտեք:
- Նկարե՛ք մեր առասպելական հերոսներին և նկարները փակցրե՛ք դասարանի «ցուցասրահում»:

1. Խմբավորե՛ք նախադասությունները երկու սյունակով. առասպե՞լ են, թե՞ իրականություն:

- Վահագնի գողացած հարդը թափվում էր և դառնում աստղեր: Այսպես է առաջացել Հարդագողի ճանապարհը:
- Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը և Հայաստանով մեկ դպրոցներ բացեց, որ բոլորը գրել-կարդալ սովորեն:
- Երբ բնության աստված Արան քնում էր, երկրի վրա ձմեռ էր սկսվում, իսկ երբ արթնանում էր, գարուն էր գալիս:

- Հայաստանում դեմ դիմաց կանգնած երկու լեռ կա՝ Արա լեռն ու Շամիրամի լեռը կամ Հատիսը:
- Տիգրան Մեծ արքան շատ հողեր նվաճեց, և նրա օրոք Հայաստանը դարձավ ծովից ծով:
- Մեզանից շուրջ երեք հազար տարի առաջ Արգիշտի արքան հիմնեց Էրեբունի բերդը, որի անվանումից էլառաջացել է մեր մայրաքաղաք Երևանի անունը:
- Միգանույշները շրջապատում էին Աստղիկ աստվածուհուն, որպեսզի մարդիկ չկարողանային տեսնել նրան լճում լողանալիս:
- Մոռացկոտ հարսը մոռացավ փակել աղբյուրի ակունքը, և ջուրը հոսելով՝ դարձավ Սևանա լիճը:

Տնային առաջադրանք

Դու՛ս գրիր սովորածդ նոր բառերը և բացատրի՛ր, գտի՛ր հոմանիշներ:
Կարդա՛ հայկական որևէ այլ առասպել և դասարանում պատմի՛ր:

ԴԱՍ 3 ՄԵՐ ԱՆՑԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Լսել ենք, որ հնում Տիգրան Մեծ անունով արքա ենք ունեցել, Վարդան Մամիկոնյան զորավար: Ինչպե՞ս իմանանք՝ ո՞վ ումից առաջ է ապրել: Հիշու՞մ եք՝ **անցյալը, ներկան** ու **ապագան** տարբերակելու համար մարդիկ ժամանակը բաժանել են միավորների՝ ամիս, տարի, դար և այլն:

Պատմական իրադարձությունների մասին խոսելիս ժամանակը պայմանականորեն բաժանում ենք երկու մեծ ժամանակահատվածի՝ Քրիստոսի ծննդից առաջ՝ **Ք.ա.** և հետո՝ **Ք.հ.**:

Երբ ասում ենք՝ 2009 թվականն է, նշանակում է, որ Քրիստոսը ծնվել է 2009 տարի առաջ: Երբ գրում ենք՝ Ք.ա. 95թ., նշանակում է՝ դեպքը կատարվել է Քրիստոսի ծնունդից 95 տարի առաջ:

Մեկ դարը հարյուր տարին է: Մեր թվարկության առաջին դարն սկսվում է 1 թվականից և վերջանում է 100 թվականով: 101 թվականը 2-րդ դարի սկիզբն է:

1. Բաժանվե՛ք խմբերի, գտեք և ծանոթացե՛ք մեր պատմության՝ ձեզ բաժին ընկած ժամանակահատվածին վերաբերող կարևոր իրադարձություններին.

1-ին խումբ - 3 հազար տարի առաջ, մինչև Ք.հ. 1-ին դար,
2-րդ խումբ - Ք.հ. 4-րդ դարից մինչև 7-րդ դար,
3-րդ խումբ - 9-րդ դարից մինչև 16-րդ դար,
4-րդ խումբ - 18-րդ դարից մինչև մեր օրերը :

Դրանց վերաբերյալ տեղեկությունները համառոտ գրեք առանձին թերթիկների վրա: Հերթով մոտենալով՝ ձեր քարտերը ներկայացրեք դասընկերներին և փակցրեք գրատախտակին՝ ստեղծելով ժամանակագրական ժապավեն: Ժապավենի վրա նշեք Ք.ա. և Ք. հ. ժամանակահատվածների սահմանը:

ՄԵՐ ԱՆՑԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Մեզանից շուրջ 3 հազար տարի առաջ Հայկական լեռնաշխարհում՝ Վանա լճի շրջանում, կազմավորվեց մի հզոր պետություն՝ Այրարատյան թագավորությունը: Արգիշտի թագավորի օրոք՝ Ք.ա 782թ., հիմնադրվեց Էրեբունի բերդաքաղաքը՝ այսօրվա մայրաքաղաք Երևանը:



4-րդ դարի սկզբին՝ 301թ.՝ Տրդատ երրորդ թագավորի օրոք, Հայաստանը դարձավ քրիստոնյա առաջին պետությունը: Վաղարշապատ մայրաքաղաքում կառուցվեց առաջին քրիստոնեական եկեղեցին՝ Էջմիածինը, որը մինչև օրս Ամենայն Հայոց Կաթողիկոսների նստավայրն է:

9-10-րդ դարերում ձևավորվեց հայ ժողովրդի բանահյուսության գոհարը՝ «Սասունցի Դավիթ» էպոսը, որի հիմքում ընկած է արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը:

18-րդ դարում Սյունիքում պարսից խաների և թուրք նվաճողների դեմ պայքարը ղեկավարեց նշանավոր զորավար Դավիթ Բեկը: Ուշագրավ է Բեքիր փաշայի դեմ տարած հաղթանակը, երբ Դավիթ Բեկն իր երեք հարյուր քաջերի և Մխիթար Սպարապետի հետ խուճապի մատնեց թուրքական բազմահազարանոց զորքը:

Վաղ միջնադարում Հայաստանում զարգացած էին ճարտարապետությունն ու քանդակագործությունը: 7-րդ դարում՝ 643-652թթ. կառուցված Զվարթնոցի եռահարկ եկեղեցու զարդաքանդակները մինչև օրս հիացմունք են պատճառում բոլորիս:



10-րդ դարից Հայաստանում գործում էին մի շարք համալսարաններ, որոնցից առավել համբավ ունեցողներն էին Գլաձորի և Տաթևի համալսարանները:



4-րդ դարի վերջին Մեսրոպ Մաշտոցը Սահակ Պարթև կաթողիկոսի և Վռամշապուհ արքայի աջակցությամբ մեկնեց ճամփորդության՝ այլ երկրների գրատեսակներն ուսումնասիրելու: Մեսրոպ Մաշտոցը հայրենիք վերադարձավ 405թ.՝ իր հետ բերելով հայոց այբուբենը:



Քրիստոսի ծննդից 55 տարի առաջ գահ բարձրացավ Տիգրան Մեծի որդին՝ Արտավազդ Երկրորդ թագավորը: Նրա օրոք Հայաստանում ծաղկեց հատկապես թատերական արվեստը: Թագավորն ինքը ոչ միայն հանդես էր գալիս որպես դերասան, այլև ողբերգություններ էր գրում:



12-րդ դարում՝ 1184 թվին, Մխիթար Գոշը ստեղծեց առաջին գրավոր օրենսդրությունը՝ «Դատաստանագիրքը»: Դեռևս միջնադարում այն թարգմանվել է տարբեր լեզուներով:



1918 թ. մայիսյան հերոսամարտերում թուրքական զորքերի դեմ տարած փայլուն հաղթանակի նշանակությունը մեծ էր հայության համար: Մայիսի 28-ին, ավելի քան 500-ամյա ընդմիջումից հետո, վերականգնվեց հայկական պետականությունը՝ ի դեմս Հայաստանի Առաջին Հանրապետության:

5-րդ դարի կեսին Պարսկաստանը ձգտում էր բռնի ուժով հավատափոխ անել Հայաստանը: Հայ ժողովրդի պայքարը ղեկավարեց Վարդան Մամիկոնյան զորավարը: 451թ. մայիսի 26-ին տեղի ունեցած այս ճակատամարտը պատմության մեջ հայտնի է Ավարայրի ճակատամարտ անունով:

1988թ. Արցախը և Հայաստանը ազատագրական պայքար սկսեցին, որը պսակվեց 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի անկախության հռչակումով և Արցախի ազատագրումով: 1991թ. սեպտեմբերի 21-ին վերականգնվեց Հայաստանի անկախությունը՝ ի դեմս Հայաստանի Երրորդ Հանրապետության:

5-րդ դարի վերջում պատմահայր Մովսես Խորենացին ստեղծեց իր «Հայոց պատմությունը», որն սկսվում է հայերի ծագումով և հասնում մինչև 5-րդ դար: Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» երկար դարեր շարունակ անփոխարինելի դասագիրք է եղել դպրոցներում:

16-րդ դարի սկզբին Հակոբ Մեղապարտը, Իտալիայի իշխանություններից թույլտվություն ստանալով, տպագրատուն հիմնեց Վենետիկ քաղաքում և սկիզբ դրեց հայկական տպագրությանը:

Քրիստոսի ծննդից 95 տարի առաջ Հայոց գահ բարձրացավ Տիգրան Երկրորդը: Նրա օրոք Հայաստանը դարձավ հզոր տերություն, որի սահմանները տարածվում էին Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով: Նա մեր պատմության մեջ հայտնի է Տիգրան Մեծ անունով:



20-րդ դարի սկզբին՝ 1915թ. ապրիլի 24-ին, թուրքական ոստիկանությունը ձերբակալեց և բարբարոսաբար սպանեց մոտ 600 անվանի հայ մտավորականների: Ապա սկսեց անպաշտպան բնակչության բռնագաղթն ու ջարդերը: Ցեղասպանության զոհ դարձան շուրջ մեկուկես միլիոն հայեր:

11-րդ դարում Միջերկրական ծովի ափին ծաղկեց Կիլիկիայի հայկական պետությունը, ուր առաջընթաց ապրեց նաև մեր մշակույթը: Այստեղ են ստեղծագործել բանաստեղծ Ներսես Շնորհալին, մանրանկարիչ Թորոս Ռոսլինը և առակագիր Վարդան Այգեկցին:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը հռչակվեց խորհրդային հանրապետություն՝ հետագայում ընդգրկվելով Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ: Հայաստանի համար սկսվեց համեմատաբար խաղաղ շրջան: Սկսեցին զարգանալ մշակույթը և գիտությունը:



Առաջին դարից մեզ հասած մի հրաշակերտ տաճար է Գառնու հեթանոսական տաճարը: Տաճարը կանգուն էր մոտ 1600 տարի, բայց 1679թ. ավերիչ երկրաշարժը քանդեց այն: Եզակի այս տաճարը վերականգնվեց 1969 - 1975թթ.:

2. **Ինչպիսի՞ն կուզենայիք տեսնել Հայաստանն ապագայում: Պատմե՛ք: Հնարավո՞ր է արդյոք ձեր ներկայացրած ապագան իրականանալի դարձնել: Ինչպե՞ս:**

Տնային առաջադրանք

Քեզ արդեն ծանոթ պատմական իրադարձությունների կամ անձանց մասին որևէ լրացուցիչ հետաքրքիր տեղեկություն գտի՛ր և գրի՛ր տետրում:

ԴԱՍ 4 ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Պետության խորհրդանիշները

Տեսած կլինեք, թե ինչպես մրցույթներում հաղթողի պատվին դրոշ են բարձրացնում: Դրոշը տեսնելով՝ մարդիկ իմանում են, թե որ երկրից է հաղթողը: Դրոշը երկրի, պետության **խորհրդանիշն** է: Պետության խորհրդանիշ են նաև **օրհներգը** և **զինանշանը**: Օրհներգը կատարելիս այդ երկրի քաղաքացիները ոտքի են կանգնում և աջ ձեռքը դնում սրտին: Դրանով ուզում են ցույց տալ, որ հարգում ու սիրում են իրենց երկիրը և պատրաստ են ծառայել նրան:

1. **Մեր պետության ո՞ր խորհրդանիշն է նկարագրված.**

Արյունից ծորած երիզ մի կարմիր,
Երկնքից պոկված կտոր մի կապույտ,
Հասուն արտերի շող ծիրանագույն...

2. **Փորձեք նույնքան պատկերավոր նկարագրել Հայաստանի Հանրապետության զինանշանը:**

1920թ. ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և նկարիչ Հակոբ Կոջոյանի հեղինակած զինանշանը 1992թ. ապրիլի 19-ի օրենքով ընդունվել է որպես Հայաստանի Հանրապետության պետական զինանշան:

3. **Աջ ձեռքը դնե՛ք սրտին և միասին կատարե՛ք Հայաստանի Հանրապետության օրհներգը:**

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Մեր հայրենիք, ազատ, անկախ,
Որ ապրել է դարեդար,
Յուր որդիքը արդ կանչում են
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա՛, եղբա՛յր, քեզ մի դրոշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:

Նայիր նրան՝ երեք գույնով
Նվիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

4. **Կարդացե՛ք Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունը: Ի՞նչ գիտեք Սասունցի Դավթի մասին: Ինչու՞ է բանաստեղծը մեր բանակը համեմատում նրա հետ:**

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

1 Ո՞վ է կանգնած լեռների հետ
էն հզորը անսասան,
Ծածանում է գլխին վետ-վետ
Իր դրոշը սրբազան:

2 Էն Սասունցի Դավիթն է հին,
Մսրա շղթան խորտակել,
Թուր-Կայծակին իրեն ձեռքին՝
Լույս աշխարհ է դուրս եկել:

3 Հայոց մթին լեռների հետ
Նա է կանգնած անսասան,
Ծածանում է գլխին վետ-վետ
Հայ դրոշը սրբազան:

5. **Ամեն պետություն իր տոներն ունի: Հայաստանի Հանրապետությունում տոնվող իրադարձություններից ո՞րը երբ է տեղի ունեցել.**

- Հայաստանը հռչակվել է անկախ պետություն:

- Ստեղծվել է Հայոց բանակը:

- Առաջին Հանրապետության օրը

- Հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրը



1- 1991թ. սեպտեմբերի 21, 2- 1992թ. հունվարի 28, 3- 1918թ. մայիսի 28,
4-1945,1992թթ. մայիսի 9, 5-1995թ. հուլիսի 5

6. **Հայաստանի պետականությունը խորհրդանշող պաստառ պատրաստեք և լրացրե՛ք ցուցահանդեսը:**

Տնային առաջադրանք

Սովորի՛ր Հայաստանի Հանրապետության օրհներգը:

ԴԱՍ 5-6 ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԵՐԿՐՈՎ

1. **Հիշե՛ք այն ամենը, ինչ գիտեք Հայաստանի մասին.**

- Ո՞րն է Հայաստանի մայրաքաղաքը:
- Ովքե՞ր են Հայաստանի բնակիչները:
- Ո՞ր երկրներն են մեր հարևանները:

2. **Բաժանվե՛ք խմբերի: Յուրաքանչյուր խմբում, նկարներից օգտվելով, Հայաստանի մարզերից մեկի մասին տեղեկություններ դուրս գրեք: Ներկայացրե՛ք դասարանին:**

Վախթանգ Անանյան
ՏԱՎՈՒՇ
Գոշավանք
Հաղարծին
Վիկտոր Համբարձումյան
Գավառ
ՍԵՎԱՆ
Վարդենիս
Վանեվանք
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ
Խոսրովի արգելոց
Արփա գետ
ՎԱՅՈՑ ՁՈՐ
Ջերմուկ
Գլաձոր
Եղեգնաձոր
Նորավանք
Ողոլմա գետ
Ձորաքար
Սյունի վանք
ՍՅՈՒՆԻՔ
Ակսել Բակունց
Սիսիան
Գորիս
Տաթև
Կապան
Համո Սահյան
Մեղրի
կզաքիս
անգղ
արծիվ
մուֆլոն
շնագայլ
նուշ
ձիթապտուղ
գինի
կարտոֆիլ
որոր

Տնային առաջադրանք

Լրացուցիչ տեղեկություններ հավաքիր քեզ բաժին ընկած մարզի մասին (նշանավոր մարդիկ, հուշարձաններ, բույսեր, կենդանիներ, գործարաններ, կլիմա, սովորույթներ և այլն):

ԵՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԵՐԿՐՈՎ

1. Բաժանվե՛ք խմբերի, ինչպես նախորդ դասին: Տետրի էջի վրա արտանկարե՛ք ձեզ բաժին ընկած մարզի ուրվագիծը և կտրե՛ք: Հավաքած տեղեկությունները համադրելով՝ միասին փոքրիկ շարադրություն գրե՛ք թերթիկի վրա և ներկայացրե՛ք դասընկերներին:

Շարադրությունները փակցրե՛ք Հայաստանը ներկայացնող ցուցահանդես-պատին՝ Հայաստանի քարտեզին համապատասխան դասավորությամբ:

Տնային առաջադրանք

Հարցուփո՛րձ արա և տեղեկություններ հավաքիր քո քաղաքի կամ մարզկենտրոնի մասին (օրինակ՝ պատմությունը, նշանավոր քաղաքացիները կամ ամենահին բնակիչները՝ մարդիկ, շենքերը, ծառերը և այլն):

ԴԱՍ 7 ԻՄ ՔԱՂԱՔԸ

Քաղաքն ապրում է մեր առօրյայով ու մեր հույսերով: Քաղաքն էլ աչքեր, ականջներ ունի. աչքերը նրա վառ լապտերներն են, իսկ ականջները քարե պատերն են՝ քաղաքի մարդկանց կյանքի պատմության պահապանները: Այդ գաղտնիքները քարակերտ անշունչ շենքերին հոգի են տալիս ու դարձնում խոսող: Նրանց ասածը ոչ-ոք չի լսում, բայց գիտենք, թե ինչ են փորձում մեզ ասել:

- Ի՞նչ են մեզ պատմում մեր քաղաքի քարե պատերը:
- Ի՞նչ կարող ենք անել մեր քաղաքի համար:

1. Բաժանվե՛ք խմբերի: Ձեր բնակավայրի ամենահին կառույցի, ամենատարեց ծառի, ամենագեղեցիկ հուշարձանի, տեսարժան վայրի համար ցուցանակներ պատրաստեք և նշեք, որ դրանք պաշտպանվում են ձեր դասարանի կողմից: Մտածեք, թե ինչպես կիրականացնեք այս պատասխանատվությունը: Ներկայացրե՛ք դասընկերներին:

Մեր վարդագույն մայրաքաղաքը

2. Ո՞ր տեսարժան վայրն է պատկերված նկարներից յուրաքանչյուրում:





■ Քաղաքապետարան ■ Օպերայի թատրոն ■ Մատենադարան
■ Ազգային պատկերասրահ ■ Սասունցի Դավթի արձանը
■ Հանրապետության հրապարակ ■ Ազգային ժողովի շենքը
■ Գ. Սունդուկյանի անվ. թատրոն ■ Եղեռնի զոհերի հուշարձանը
■ Հաղթանակ կամուրջ ■ Հրազդան մարզադաշտ
■ Մայր Հայաստան արձանը

Գիտե՞ք, որ...

Մեծ եղեռնից փախչող երկու կին լեռնոտ ճանապարհներով դժվարությամբ մի հսկա գիրք էին տանում: Դա 13-րդ դարում գրված **«Մշո ճառընտիրն»** էր: Այն մոտ 30 կգ էր կշռում և կանայք ստիպված էին բաժանել երկու մասի: Այդ երկու անձնազոհ կանանց շնորհիվ երկու մասերն էլ փրկվեցին և հիմա գիրքը կարող եք տեսնել Մատենադարանում: Գիրքն ունի 601 էջ՝ պատրաստված **մագաղաթից**: Մատենադարանում են պահվում ավելի քան 15000 մագաղաթյա ձեռագրեր, որոնցից ամենափոքրը լուցկու տուփի մեծություն ունի:

- Ի՞նչ գիտեք Երևանի պատմությունից:
- Է՞լ ինչ հետաքրքիր վայրեր գիտեք Երևանում, որ կուզենայիք այցելել:
- Ի՞նչն եք հավանում և ի՞նչը չեք հավանում Երևանում:
- Ո՞ր եղանակին եք Երևանն ամենագեղեցիկը համարում:

Պատմության ընթացքում Հայաստանն ունեցել է տասներկու մայրաքաղաք՝ Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան, Կարս, Անի, Երևան

Տնային առաջադրանք

Պատկերի՛ր բնակավայրդ քո սիրած եղանակին (նկարով, շարադրությամբ կամ այլ կերպ):

ԴԱՍ 8 ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԻՆ

1. Համադրեք և պարզեք, թե ո՛ր երկիրն ինչով է ներկայանում աշխարհին.

Ֆրանսիա, Ռուսաստան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Իտալիա

- Այս երկրի մայրաքաղաքը կոչվում է իրենց առաջին նախագահ Ջորջ Վաշինգտոնի անունով:
- Այս երկրում է ապրում մեր հայրենակից, աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրը:
- Այս երկրում մարդիկ շատ են սիրում սպագետի և պիցցա ուտել:
- Սիրված մուլտֆիլմերի հեղինակ Ուոլտ Դիսնեյը այս երկրում կառուցեց մի հեքիաթային աշխարհ՝ Դիսնեյլենդը:
- Այս երկրում է ապրել «Ոսկե ձկնիկը» և էլի շատ հեքիաթների հեղինակ Ալեքսանդր Պուշկինը:
- Այս երկիրը Չիպոլինոյի և Ջելսոմինոյի մասին հեքիաթների հեղինակ Ջանի Ռոդարիի հայրենիքն է:
- Այս երկիրն առաջին տիեզերագնաց Յուրի Գագարինի հայրենիքն է:
- Այս երկիրը «Երեք հրացանակիրներ» վեպի հեղինակ Ալեքսանդր Դյումայի հայրենիքն է:
- Այս երկիրն ունի 50 նահանգ, և նույնքան աստղ կա երկրի դրոշին:
- Աշխարհի ամենամեծ այս երկրի մայրաքաղաք Մոսկվան ոսկեգմբեթ են անվանում բազմաթիվ եկեղեցիների ոսկեզօծ գմբեթների համար:
- Ճարտարագետ Էյֆելի կառուցած հայտնի աշտարակը դարձավ այս երկրի մայրաքաղաք Փարիզի խորհրդանիշը:
- Այս երկիրը նշանավոր օպերաների հեղինակ Ջուզեպպե Վերդիի հայրենիքն է:

2. Նախորդ վարժության օրինակով մտածե՛ք և կազմե՛ք Հայաստանը ներկայացնող երեք նախադասություն:

- Ի՞նչ նշանավոր հայ մարդկանց անուններ գիտեք:
- Ինչո՞վ են հայտնի դարձել:

3. **Գտեք, թե ներկայացված տեղեկություններից ո՛րը մեր նշանավոր հայրենակիցներից ու՛մ է վերաբերում:**

Անանիա Շիրակացի
մաթեմատիկոս, աստղագետ



Գրիգոր Նարեկացի
բանաստեղծ



Թորոս Ռոսլին
մանրանկարիչ



Հովհաննես Թումանյան
գրող, բանաստեղծ

Գոհար Գասպարյան
օպերային երգչուհի

Հովհաննես Այվազովսկի
ծովանկարիչ

Արամ Խաչատրյան
կոմպոզիտոր



Ալեքսանդր Թամանյան
ճարտարապետ



Մարտիրոս Սարյան
նկարիչ

Վիկտոր Համբարձումյան
աստղաֆիզիկոս

Կոմիտաս
երգահան

Յուրի Վարդանյան
ծանրորդ

Տիգրան Պետրոսյան
շախմատիստ

Լեոնիդ Ենգիբարյան
ծաղրածու

Հովհաննես Ադամյան
գյուտարար

Անդրանիկ Օզանյան
զորավար

- Ծնվել է Գյումրի քաղաքում:
- Ճանաչվել է աշխարհի լավագույն ծանրորդ:
- Օլիմպիական չեմպիոն է, սահմանել է աշխարհի 43 ռեկորդ, նվաճել է 111 ոսկե մեդալ:

- Ապրել է Կիլիկիայում, 13-րդ դարում:
- Նրա նկարազարդած ձեռագրերը պահվում են Մատենադարանում:
- Ասում են՝ թագավորին բացել է տվել ցորենի ամբարները, և այդ տարի սովից ոչ մի մարդ չի տուժել:

- Ծնվել է Լոռու Դսեղ գյուղում:
- Գրել է «Շունն ու կատուն», «Մի կաթիլ մեղրը», «Գիքորը»:
- «Ամենայն հայոց բանաստեղծ» է մեծարվել:

- Ծնվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում:
- Բանաստեղծ Ավետիք Իսահակյանը մի օր հիացած դիմել է երգչուհուն. «Արդյոք դու՞ ես սոխակից երգել սովորել, թե՞ սոխակը քեզնից»:
- Երգել է աշխարհի ամենահայտնի բեմերում:

- Իր երեք զինվորներով խուճապի մատնեց Քոսա Բինբաշուն՝ իր հազար ձիավորներով:
- Թուրքերի դեմ նրա մղած պայքարի մասին բազմաթիվ ավանդապատումներ են հյուսվել:
- Նրա անունն է կրում Երևանի մետրոյի կայաններից մեկը:

- Ապրել և ստեղծագործել է 10-րդ դարում:
- Նրա գլուխգործոցը «Մատյան ողբերգության» պոեմն է:
- «Նարեկ» անունով հայտնի այս գրքին ժողովուրդը բուժիչ հատկություն է վերագրում:

- Գունավոր հեռուստացույցի գյուտարարն է:
- Նրա առաջարկած հեռուստացույցն առաջին անգամ կիրառվել է 1928 թ. Լոնդոնում:

- Հայաստանը նրա վրձնի վառ գույներով է ճանաչվում:
- Մեծ նկարչի տուն-թանգարանը գտնվում է Երևանում՝ նկարչի անունը կրող փողոցի վրա:

- Նախագծել է մայրաքաղաք Երևանի գլխավոր հատակագիծը:
- Նրա մասին Չարենցն ասել է՝ «Նա տեսել էր, երևի, արևային մի քաղաք...»:
- Նրա արձանը կանգնած է Երևանի կենտրոնում՝ իր անունը կրող զբոսայգում:

- Հիմնադրել է Բյուրականի աստղադիտարանը:
- Երկար տարիներ ղեկավարել է Հայաստանի գիտությունների ակադեմիան:
- Մեծանուն գիտնականի տուն-թանգարանը գտնվում է Բյուրականի աստղադիտարանում:

- Հավաքել և մշակել է շուրջ 4 հազար ժողովրդական երգ:
- Բանաստեղծ Պարույր Սևակը նրա մասին գրել է.

«Դու ամենայն Հայոց երգի Վեհափառն ես,
Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,
Գիրն ու տառն ես Հայոց երգի»:

- Շախմատի արքա, աշխարհի կրկնակի չեմպիոն:
- Նրա խաղացած բազմաթիվ պարտիաներ տեղ են գտել շախմատային դասագրքերում:

- Նրան անվանում են «Ծաղրածուն՝ աշունը սրտում»:
- Պրահայի՝ ծաղրածուների միջազգային մրցույթում շահել է առաջին մրցանակը:
- Երևանում՝ կրկեսի շենքի դիմաց, կանգնած է տաղանդավոր արտիստի արձանը:

- Ապրել է 7-րդ դարում:
- Ասել է. «Ինչպես ձվի դեղնուցը կլոր մեջտեղումն է, սպիտակուցը՝ նրա շուրջը, իսկ կեղևը շրջապատում է չորս կողմը, այնպես էլ Երկիրը գտնվում է մեջտեղում, օդը՝ նրա շուրջը և երկինքը շրջապատում է չորս կողմը»:

- Ապրել է Ռուսաստանի Թեոդոսիա քաղաքում:
- Նկարել է «Իններորդ ալիքը»:
- Հյուրանոցատերերին զգուշացրել էր, որ չընդունեին քաղաք ժամանած հայերին, որպեսզի նրանց իր տանը հյուրընկալեր:
- Հայաստանի պատկերասրահը նրա գործերի մեծ հավաքածու ունի:

- «Սպարտակ» և «Գայանե» բալետների հեղինակն է:
- Նրա անունով է կոչվում ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահը:

4. Բացատրե՛ք Հ. Թումանյանի տողերը.

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՞կ նրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:

ԴԱՍ 9 ՈՒՄԻ՞Չ Է ԿԱԽՎԱԾ

ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

Մեզանից հեռու Սահտուր և Տաքաղ անուններով երկու հարևան երկրներ կային: Ամեն ինչով իրար նման էին. թե՛ բնությունն էր նույնը, թե՛ եղանակը, թե՛ մեծությունը: Մի բանով էին միայն տարբերվում՝ բնակիչների բնավորությամբ:

Սահտուրցիներն աշխատասեր էին, մաքրասեր և խնայող: Հնությունները խնամքով պահպանում էին, բակերն ու փողոցները ծառ ու ծաղիկով գեղեցկացնում: Ամեն մեկն իր գործը բարեխիղճ էր անում, և միշտ պատրաստ էին միմյանց օգնել: Իրար հանդեպ բարյացակամ էին: Ամեն գործ ավարտելուց հետո էլ միասին քեֆ էին անում, ուրախանում: Տաքաղցիները անհոգ ու շռայլ մարդիկ էին: Նրանցից ամեն մեկն ասում էր՝ մարդ մի անգամ է ապրում, էլ ինչու՞ խնայեմ, ինչու՞ ինձ նեղություն տամ, ինչու՞ պիտի հենց ես անեմ, թող ուրիշները մտածեն: Աշխատանքը մի կերպ, կիսատ-պռատ անում էին ու շտապում խնջույքի՝ կրկնելով, որ գործը գայլ չի՝ անտառ չի փախչի, հետո կհասցնեն:

Թե՛ մեկ, թե՛ մյուս երկրի մարդիկ համարում էին, որ շատ են սիրում իրենց երկիրը:

1. Տարբերակի՛ր նախադասությունները և գրի՛ր երկու սյունակով. տաքաղցի՞ է, թե՞ սահտուրցի:

- Շատ է կարդում այլ երկրների ու ժողովուրդների մասին և սովորած լավ բաները փորձում է կիրառել:
- Աղբը պատուհանից թափում է, որ իրենց տունը մաքուր լինի:
- Իր գործը բարեխիղճ է կատարում և հպարտանում է դրանով:
- Ծառին իրենց երկիրը գովազդող ցուցանակ է մեխել:
- Հասկանում է, որ բնության պաշարներն անսպառ չեն և դրանք խնամքով է օգտագործում:
- Սիրած ասացվածքն է. «Քանի ուտեմ՝ դուր կգա, հենց որ կանգնեմ մի գործի՝ գլուխս ցավից շուռ կգա»:
- Ամեն գարուն բակում ծառատունկ է կազմակերպում, ծաղկանոց սարքում:
- Հուշարձանների պատերին իր և ընկերների անուններն է փորագրել. թող բոլորն իմանան, որ եղել են այդտեղ:
- Խաղահրապարակի ճոճանակները նորոգել է և նստարաններ պատրաստել:

- Ո՞ր երկրի բնակիչներն էին իսկապես սիրում իրենց երկիրը: Հիմնավորեք ձեր կարծիքը:
- Ձեր կարծիքով ինչպիսի՞ն կլինի այս երկրներից յուրաքանչյուրն ապագայում:

2. **Փորձե՛ք Սահտուր և Տաքաղ անվանումների տառերի մեջ տեղափոխություն անելով բացահայտել գաղտնագրված անունները: Հիմնավո՞ր են դրանք: Ինչու՞:**

3. **Կարդացե՛ք ոտանավորը և բացատրե՛ք.**

- Ո՞վ էր մեղավոր, որ երկիրն ընկավ:
- Ինչու՞ է կարևոր, որ ամեն մեկն իր գործը բարեխիղճ անի:

Մի մեխի պակասից պայտն ընկավ,
Մի պայտի պակասից ձին ընկավ,
Մի ձիու պակասից զինվորն ընկավ,
Զինվորի պակասից զորքն ընկավ,
Զորքի պակասից երկիրն ընկավ,
Ու այս ամենը մի փոքրիկ մեխի պակասից...

ԴԱՍ 10 ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ

1. Մեր շուրջը հաճախ բաներ ենք տեսնում, որ մեզ այնքան էլ դուր չեն գալիս: Մի ցուցակ կազմեք՝ թվարկելով այն ամենը, ինչը կուզենայիք, որ փոխվեր: Մենք ինչո՞վ կարող ենք օգնել:
Թվարկածից ընտրե՛ք որևէ խնդիր և մտածե՛ք, թե դուք ինչպես կարող եք օգնել, որ այն հաղթահարվի: Կարելի է՝

- պաստառ պատրաստել, որպեսզի ուրիշներն էլ իմանան և կարողանան օգնել,
- հայտարարություն գրել և հրավիրել միասին աշխատելու (աղբահավաք, ծառատունկ) և այլն,
- սերմեր ձեռք բերել և դասարանում կամ դպրոցի բակում ծաղիկներ աճեցնել: Լավագույն ծաղկանոցի մրցույթ հայտարարել,
- Օգնել մեր փետրավոր բարեկամներին, որոնք այնքան էլ լավ չեն զգում ձմռան ցրտին:



Մի փոքրիկ քաղաքի կենտրոնական զբոսայգում հրաշք խաղալիք կա: Հսկայական խոզուկ է՝ մեջքին բացվածքով: Հենց որ բացվածքի մեջ որևէ բան ես գցում, խոզուկն սկսում է երգել ու պարել: Խոզուկը զբոսայգում խաղացող երեխաների սիրելին է: Ի՞նչ եք կարծում, բացի երեխաներին զվարճացնելուց, է՞լ ինչի է ծառայում խաղալիքը: Բոլորի սիրելի այս զբոսավայրում հե՞շտ է մաքրություն պահպանելը:

- Կռահե՛ք՝ երկու երկրներից որու՞մ կարող էր լինել այս քաղաքը՝ Սահտուրու՞մ, թե՞ Տաքաղում:

2. **Մտածե՛ք և դու՛ք էլ մի հնարամիտ բան հորինեք մեր շրջապատը մաքուր և հյուրընկալ դարձնելու համար:**

3. **Տեղադրե՛ք տառերն ըստ գույների և կարդացե՛ք ասույթը: Բացատրեք, թե ինչպես եք հասկանում:**

Մ Ա Ն Ե Ծ Ջ Բ Ր Լ Շ Ո Ղ Փ Խ Ը Կ Ս Ի Վ



Տնային առաջադրանք

Լրացրու՛ թերթիկը և մտածի՝ր ի՞նչն է, որ չենք անում, բայց կարող ենք անել:

ԻՆՉՊԵՍ Է ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ ՀՈԳՈՒՄ ՄԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

		ԱՅՈ	ՈՉ
1	Գիտենք, սիրում և պահպանում ենք մեր գեղեցիկ ավանդույթները:		
2	Այլ երկրներից սովորած լավ բաները փորձում ենք կիրառել մեր երկրում:		
3	Հոգ ենք տանում մեր քաղաքի, հուշարձանների, բնության մասին:		
4	Միշտ պատրաստ ենք օգնել ուրիշներին:		
5	Երբ բնության գիրկն ենք գնում, մեր թափած աղբը հավաքում և աղբարկղն ենք լցնում:		
6	Հոգում ենք կենդանիների մասին ծաղիկներ ենք ցանում, ծառ ենք տնկում:		
7	Ծորակները փակում ենք, որ ջուրն աննպատակ չհոսի, սենյակից դուրս գալիս՝ հանգցնում ենք լույսերը:		
8	Դատարկ շշերը հանձնում ենք, թղթի աղբն առանձնացնում ենք, որ հանձնենք մշակման:		

ԴԱՍ 11 ԹՈՒՅԼ ՉՏԱՆՔ

1. Ծանոթացե՛ք քարտերին: Ի՞նչ կասեք նկարագրված արարքների մասին:

Հայաստանն անտառներ քիչ ունի, և դրանք ամեն օր անխնա հատվում են:

Չկնառատ Սևանից ձուկ են որսում արգելված ամիսներին կամ անթույլատրելի քանակով:

Կոտրում են ծառերի ծաղկած ճյուղերը, անխնա քաղում են ծաղիկները:

Աղբը թափում են՝ ուր պատահի:



Կոտրում են փողոցի լապտերները, փչացնում են նստարանները:

Իրենց անուններն են փորագրում պատերին, փչացնում են պատմական հուշարձանները:

- Կարո՞ղ եք ուրիշ օրինակներ բերել:
- Ինչպե՞ս կբնութագրեք այդ արարքներն անող մարդկանց:

2. Բաժանվե՛ք խմբերի: Ընտրե՛ք ներկայացված արարքներից մեկը և միասին աշխատելով՝ լրացրե՛ք թերթիկն ըստ օրինակի, քննարկե՛ք և առաջարկնե՛ր արեք.



3. Պատկերացրեք, թե կարող եք նամակ գրել վատ արարք անող մարդուն: Ինչպե՞ս կբացատրեք, որ չանի: Ձեր խմբի պատրաստած նամակը ներկայացրե՛ք դասընկերներին: Միասին քննարկե՛ք, առաջարկներ և լրացումնե՛ր արեք:

Տնային առաջադրանք

Դասերից հետո դրսում մի հարմար տե՛ղ ընտրիր և նամակդ փակցրու՛, որպեսզի ուրիշներն էլ կարողանան կարդալ և դասեր քաղել:

Firefox https://ebooks.bonee.net/books/tyhu/

ԴԱՍ 12 ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՏԵՍԵ՞Լ ԵՍ, ԱՍԱ՛

Աշխարհում շատ հետաքրքիր ու տեսարժան վայրեր կան, և ամեն երկիր հպարտանում է իր հրաշալիքներով:

Սևանա լիճը

■ **Կարո՞ղ եք տարբեր երկրների մի քանի տեսարժան վայրեր հիշել:**

Մենք էլ մե՛ր հրաշալիքներն ունենք՝ թե՛ բնության, թե՛ մարդու ստեղծած:

Հրաշալիք է գեղեցկուհի Սևանա լիճը: Այն աշխարհի բարձրադիր մեծ ու գեղեցիկ լճերից մեկն է:

Արագած լեռը

Հրաշալիք են մեր ամենաբարձր լեռը՝ քառագագաթ Արագածը, Շաքիի վեհաշուք ջրվեժը...

Շաքիի ջրվեժը

Հրաշալիք է Գեղարդի վանքն իր ժայռափոր եկեղեցիով, Էջմիածինը, որ աշխարհի առաջին քրիստոնեական եկեղեցին է:

Հայոց աշխարհի հրաշալիք է հայ առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի հիմնած Ամարասի վանքը, ուր գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցը բացել է Արցախի առաջին դպրոցը:


Գեղարդի վանքը

Հրաշալիք է Գառնու տաճարը, որ մեզ է հասել առաջին դարից:

Հրաշալիք է մագաղաթյա ձեռագրերի և ոսկեղենիկ մանրանկարների գանձարան Մատենադարանը:

Հրաշալիք են նրբակերտ խաչքարերը՝ խաչի պատկերով, ասեղնագործ ժանյակի պես նախշազարդված քարե սալերը, որ միայն Հայաստանում կարելի է տեսնել:


Էջմիածնի Մայր տաճարը


Գառնու տաճարը

Խաչքար


Մատենադարանը

70 von 98 12.02.2021, 09:28

1. Ինչի՞ մասին կուզենայիր պատմել, ի՞նչ կուզենայիր ցույց տալ Հայաստան այցելած հյուրերին: Թուղթը բաժանի՛ր չորս մասի և ամեն մասում գրի՛ր մեկ բան.

պատմական հուշարձան	ուտելիք և ըմպելիք
տոն կամ ավանդույթ	բնություն

2. Բաժանվե՛ք խմբերի: Պատկերացրեք, թե ձեզ հյուր է եկել մեկը, որ Հայաստանի մասին ոչինչ չգիտի: Դուք մեկ օր ունեք և պետք է ներկայացնեք Հայաստանն իր առանձնահատկություններով:

Օգտվե՛ք նախորդ վարժության լրացրած թերթիկներից՝ համադրե՛ք դրանք և միասին մեկ օրվա ծրագի՛ր կազմեք հյուրի համար. ի՞նչ ցույց կտայիք, ի՞նչ կհյուրասիրեիք, ի՞նչ կպատմեիք: Աշխատանքները ներկայացրե՛ք դասարանին:

3. Մտածե՛ք և փորձե՛ք բացատրել. ի՞նչ բան է ազգային առանձնահատկությունը:

Բոլո՞ր ազգերն ունեն առանձնահատկություններ: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:

Տնային առաջադրանք

Մեծերի օգնությամբ փորձի՛ր մեր ազգային որևէ առանձնահատկություն հիշել: Ինչո՞վ է այն հետաքրքիր: Պատմի՛ր դասընկերներիդ:

ԹԵՄԱ 6
ԵՍ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 1 ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ

Մի գույնզգույն տուփի մեջ գունավոր մատիտներ էին համերաշխ ապրում: Մի օր տուփից դուրս եկան, շուրջբոլորը նայեցին ու տեսան, որ ինչ-որ մարդիկ, տարբեր պատճառներ բռնելով, իրենց մյուսներից լավն են կարծում: Մատիտները խելքները թռցրին. չէ՞ որ վատ օրինակը վարակիչ է, ու սկսեցին միմյանց հետ կռվել: Ամեն մեկը կարծում էր, որ իր գույնը մյուսներից կարևոր է:

1. Բաժանվե՛ք 7 խմբի, 10-ական փոքրիկ թղթիկ վերցրեք և ընտրե՛ք 7 գույներից մեկը՝

կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն:

- Խմբում փորձե՛ք, առանձին թղթիկների վրա, ձեզ բաժին ընկած գույնի բաներ նկարել, որ ձեր կարծիքով կարևոր են մարդկանց համար (պտուղներ, ծաղիկներ, կրակ, արև, ջուր, ծառ, երկինք, հաց և այլն):
- Երբ ավարտեք, խմբերով հերթով մոտեցե՛ք և նկարները կամարաձև փակցրե՛ք գրատախտակին, ինչպես ցույց է տրված նկարում:

Փակցնելով՝ փորձե՛ք հիմնավորել, որ ձեր խմբի գույնն անենակարևորն է, օրինակ. «Կարմիրը թե չլիներ, կարմիր վարդը չէր լինի, լոլիկ, անուշահամ ելակ, ջերմացնող կրակը չէր լինի...» կամ՝ «Դեղին գույնը թե չլիներ, դեղին հասկեր չէին լինի, դեղին խատուտիկներ, թթվաշ կիտրոն, դեղնակտուց ճուտիկները չէին լինի..» և այլն:

...Այսպես վիճեցին մատիտները, թե իրենցից ով է մյուսներից լավ ու կարևոր, մեկ էլ հայացքներն ընկան նկարներին, ու հասկացան, որ իրենց արածը հիմարություն էր: Խելքները գլուխները հավաքեցին ու այնուհետ համերաշխ ապրեցին:

- Մատիտներն իրենցից անկախ ի՞նչ էին պատկերել:
- Ի՞նչ հասկացան մատիտները, երբ պատկերը տեսան:
- Իսկ դու՞ք ինչ հասկացաք, ո՞րն է ամենակարևորը:
- Ինչե՞ր հնարավոր չէ պատկերացնել առանց բազմազան գույների **համագործակցության**:

- **Մարդկանց ի՞նչ արարքներ կարող էին մատիտների համար վատ օրինակ դառնալ:**

ԲՈԼՈՐՍ

Մեր մոլորակի վրա ապրում է ավելի քան 6 միլիարդ մարդ՝ Երկրագնդի ժողովուրդների «ծիածանը»:

Ըստ մաշկի գույնի՝ նրանք բաժանվում են **սպիտակամորթների, սևամորթների, դեղնամորթների** և **կարմրամորթների**:

Երկրի ինչ-որ շրջաններ խիտ են բնակեցված, ինչ-որ շրջաններ էլ համարյա ամայի են: Ամեն շրջան իր ապրելակերպն ու կենցաղն ունի, ինչով էլ պայմանավորված են մեր տարբերությունները:

Մարդիկ շարունակ ճանապարհորդում են, հանդիպում են իրենց նման ու տարբեր այլ մարդկանց, նոր բաներ սովորում, նոր ընկերներ ձեռք բերում:

Մեր մաշկը կարող է տարբեր գույների լինել, մենք կարող ենք լինել տղա կամ աղջիկ, նիհար կամ գեր, կարճլիկ կամ բարձրահասակ, ծեր կամ երիտասարդ: Մեր մազերը ուղիղ են կամ գանգուր, սև, շեկ, կարմրավուն, աչքերը՝ տարբեր գույների:

Բայց մեզանից ոչ մեկը մյուսից ավելի լավը կամ վատը չէ:

Բոլորս էլ ուտել ու խմել ենք ուզում: Երջանիկ ու հարմարավետ ապրել ենք ուզում: Ուզում ենք, որ մեզ սիրեն: Խաղաղություն ու ընկերներ ենք ուզում:

Բոլորս մի մեծ ընտանիք ենք՝ Երկիր մոլորակի մարդիկ:

- Լա՞վ է, արդյոք, միմյանց մասին ավելի շատ իմանալը: Ինչու՞:

■ Ինչպե՞ս եք հասկանում նկարը: Բացատրե՛ք:

Տնային առաջադրանք

Բավիղում մոլորվածներին օգնի՛ր տուն հասնել: Ո՞վ որտե՞ղ է ապրում: Ի՞նչ գիտես նրանցից յուրաքանչյուրի բնակավայրի, սովորույթների, կենցաղի մասին:



ԴԱՍ 2 ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ԹՅՈՒՐԵՄԲՌՆՈՒՄԻՑ

ՄԱՐԴՈՒԿՆԵՐԸ

Հսկա կաղնու փչակում 11 ուրախ մարդուկներ էին ապրում: Նրանք նավակ ունեին, որով սիրում էին լավ եղանակին զբոսնել մոտակա լճակում: Մի օր մարդուկներից մեկը՝ Խոստիկը, լճակի ափով քայլելիս նկատեց, որ նավակը ծակվել է: Մարդուկները լողալ չգիտեին ու եթե ջուրն ընկնեին, կխեղդվեին: Խոստիկը վախեցավ և վազեց, որ ընկերներին զգուշացնի: Բայց մարդուկներն աղմուկ-աղաղակով բռնոցի էին խաղում, ու ոչ ոք նրա վրա ուշադրություն չդարձրեց: Երգ ու ծիծաղով նրանք վազեցին լճակի ափ: Խոստիկը ստիպված առաջ անցավ, ցատկեց նավակն ու ընկերներին հրեց, որ թույլ չտա նավակ նստել: Մարդուկները բարկացան՝ կարծեցին, թե Խոստիկն ուզում է մենակ զբոսնել: Նրան մի կողմ հրեցին, ցատկեցին նավակ, ու նավակը փշուր-փշուր եղավ: Լավ էր, որ ոչ ոք չտուժեց:

- **Մարդուկներն ինչու՞ բարկացան Խոստիկի վրա: Ի՞նչն էր թյուրըմբռնման պատճառը:**

1. Բաժանվե՛ք խմբերի և կանոնե՛ր մտածեք, որ մարդուկներին կօգնեն խուսափել նման իրավիճակներից:

- Է՞լ երբ են կանոններ պետք:
- Ի՞նչ կանոններ գիտեք:
- Կարո՞ղ ենք ապրել առանց կանոններին հետևելու: Ինչու՞:

2. Կարդացե՛ք և պատասխանե՛ք հարցերին:

Մի զբոսաշրջիկ Բուլղարիա է գալիս: Շոգից ծարաված՝ մոտենում է մի տան, թակում է դուռը և քաղաքավարությամբ տանտիրուհուն դիմում.
- Մի բաժակ ջուր կտա՞ք:
Կինը գլուխը տարուբերում է ու ներս գնում: «Ինչ անհյուրընկալ

ժողովուրդ են», - մտածում է ճանապարհորդը և նեղացած՝ թողնում է, հեռանում:

Պարզվում է, որ բուլղարացիներն «այո» ասելիս գլուխը տարուբերում են, իսկ «ոչ» ասելիս գլխով անում՝ ճիշտ և ճիշտ մեր հակառակը: Իսկ տանտիրուհին պարզապես ներս էր գնացել ջուր բերելու:

- **Ճանապարհորդն ինչու՞ էր նեղացել: Ի՞նչն էր թյուրըմբռնման պատճառը:**

Հայաստանից մի գիտնական Դանիայում իր հետազոտությունն է ներկայացնում: Ներկաները ցուցամատը քունքի մոտ պտտեցնելով՝ իրեն են նայում ու ծափահարում: Գիտնականը շփոթվում է. ինչ տարօրինակ արձագանք է, մի՞թե ուզում են ասել, որ ներկայացրածը հիմարություն է: Այդ դեպքում ինչու՞ են ծափահարում:

Պարզվում է, որ Դանիայում այդ շարժումը նշանակում է՝ «շա՛տ խելացի մարդ է»:

Գիտնականն ինչու՞ էր շփոթվել:

- **Ի՞նչն էր թյուրըմբռնման պատճառը:**

Երկու հնագետ՝ արևմտահայ և արևելահայ, միասին պեղումներ են անում: Խոր փոսից պետք է գտածն արկղով վեր բարձրացնեին: Արևելահայը փոսն է իջնում, պարանը փաթաթում է արկղի շուրջ, իսկ արևմտահայը վերևից պարանը ձգելով փորձում է արկղը բարձրացնել:

- Ձգի՛ր, ձգի՛ր, - ցածից խրախուսում է արևելահայը: Գործընկերը պարանը բաց է թողնում, և երկուսով տարակուսած միմյանց են նայում:

Պարզվում է՝ արևմտահայերենով «ձգել» նշանակում է «գցել»:

- **Հնագետներն ինչու՞ էին տարակուսել:**
  Ի՞նչն էր թյուրըմբռնման պատճառը:

- Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ միմյանց չհասկանալը:
- Է՞լ ինչը կարող է թյուրըմբռնում առաջացնել:

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Ասում են՝ մարդիկ մի ժամանակ մեկ լեզվով էին խոսում: Նրանք լավ էին ապրում և շուտով այնքան մեծամտացան, որ կարծեցին, թե կարող են Աստծուն հասնել: Ու որոշեցին երկինք հասնող մի աշտարակ կառուցել: Աստված այս բանը տեսնելով՝ շատ զայրացավ: Նա որոշեց պատժել հանդուգն մարդկանց և խառնեց լեզուները: Մարդիկ դադարեցին միմյանց հասկանալ ու այդպես էլ չկարողացան ավարտել աշտարակաշինությունը:

3. Բաժանվե՛ք խմբերի: Պատկերացրե՛ք, թե հայտնվել եք մի երկրում, ուր ձեզ անծանոթ լեզվով են խոսում: Ի՞նչ հարցեր կարող են առաջանալ: Միասին 3-4 հարց մտածե՛ք և փորձե՛ք առանց խոսելու՝ մնջախաղով հասկացնել ձեր հարցը, իսկ մյուս խմբերը թող փորձեն կռահել:

Տնային առաջադրանք

Երբևէ պատահե՞լ է, որ քեզ սխալ հասկանան, կամ դու սխալ հասկանաս: Ի՞նչ ես զգացել այդ պահին: Մի քանի նախադասությամբ նկարագրի՛ր իրավիճակը:

ԴԱՍ 3 ՊԻՏԱԿՆԵՐ

1. Նայե՛ք նկարներին և ասե՛ք. ի՞նչ եք տեսնում: Շրջե՛ք գիրքը և նորի՛ց նայեք. հիմա՞ ինչ եք տեսնում:

Պատահում է, որ մարդիկ միևնույն նկարին նայեն ու տարբեր բաներ տեսնեն: Պատահում է, որ նույն բանը լսեն, բայց տարբեր կերպ հասկանան: Պատահում է, որ ուրիշների արարքները սխալ հասկանան, երևի՝ որովհետև չեն ցանկացել նրանց լսել կամ ինչ-որ բաներ չգիտեն: Հաճախ էլ, լավ չհասկացած, շտապում են գնահատական տալ, ասում են՝ այսինչը հիմար է, չար է, նախանձ է: Ու այսպես մարդկանց անտեղի վիրավորում՝ «պիտակ են կպցնում», մականուն են դնում:

2. Բաժանվե՛ք խմբերի և ծանոթացե՛ք իրավիճակներին: Երեխաներին մականունները անարդար են տրվել: Փորձե՛ք իրավիճակներին այնպիսի բացատրություն տալ, որ պարզ դառնա մականունների անհիմն լինելը:

1. Մեր դասարան Պետիկ անունով մի տղա էր եկել: Տղաներն ասացին, որ դասերից հետո նրան հաճախ ծխախոտի կրպակի մոտ են տեսնում: Դասարանցիները Պետիկին ամոթանք տվեցին՝ «ծխող», «խուժան», «շոգեքարշ» անվանեցին:
2. Մի օր երեխաները, աղմուկ լսելով, բակ վազեցին ու տեսան, որ Գրիգորը՝ կացինը ձեռքին, ընկուզենու տակ կանգնած, ինչ-որ մարդկանց հետ կռիվ է անում: Ընկերները մոտեցան, սկսեցին Գրիգորին «կռվարար», «բնության թշնամի», «ծառեր սպանող» և ուրիշ վատ անուններ ասել:
3. Տղաներից մեկը վազելով դասարան եկավ ու ասաց, որ Սուրիկը փողոցում կանգնած լաց է լինում: Քիչ ուշ, երբ Սուրենը դպրոց եկավ, դասընկերները սկսեցին ծաղրել նրան ու «լացկան», «աղջիկ», «մամայի բալա» կանչել:
4. Բոլորը գիտեին, որ Նազիկի պայուսակում միշտ մի քանի գրիչ է լինում: Բայց մի օր, երբ Հերմինեն նրանից գրիչ խնդրեց, Նազիկն ասաց՝ չունեմ: Հերմինեն նեղացավ, ասաց, որ Նազիկը ժլատ է: Այսուհետև, Հերմինեի պատմածը լսելով՝ ուրիշներն էլ սկսեցին Նազիկին «ժլատ», «խոզ», «գրիչի մեռած» մականուններով կոչել:

- Ի՞նչն էր մականուններ դնելու պատճառը: Ինչու՞ էին դրանք անարդարացի:
- Ի՞նչ կարող էին անել երեխաները ընկերներին նեղացնելուց խուսափելու համար:

3. **Կարդացե՛ք, մտորե՛ք և փորձե՛ք պատասխանել հարցերին:**

ԱՌՅՈՒԾԸ ԵՎ ՊԻՏԱԿԸ

Սերգեյ Միխալկով

Ահեղ Առյուծը քնից արթնացավ ու սարսափեց. ինչ-որ մեկը, երևի կատակով, պոչին պիտակ էր կպցրել, վրան գրված՝ «Ավանակ»: Ինչպե՞ս ազատվեր պիտակից: Որոշեց գազաններից օգնություն խնդրել:

«Բոլորդ էլ գիտեք, որ ես Առյուծն եմ, չէ՞»,- հարցրեց նրանց:

«Մենք գիտենք, որ Առյուծն ես,- ասաց Բորենին,- բայց մյուս կողմից՝ եթե վրադ գրված է, որ Ավանակ ես, ուրեմն մի բան կա»:

«Ո՞նց թե,- վրդովվեց Առյուծը,- ախր ե՞րբ եք տեսել, որ ես խոտ ուտեմ»:

«Տեսքից Առյուծի նման ես,- ասաց Աղվեսը,- բայց ի՞նչ իմանանք»:

«Ա՛յ Ավանակ,- դիմեց Առյուծն էշին,- գոնե դու ասա՝ ես ախոռու՞մ եմ ապրում»:

Ավանակը մտածեց, հետո ասաց. «Դեռ Ավանակ չես, իհարկե, բայց կարծես՝ արդեն Առյուծ էլ չես»:

Առյուծը շատ արդարացավ, փորձեց բացատրել: Նրան խղճացին, բայց պիտակն այդպես էլ չհանեցին: Շուտով հյուծվեց, ուժը կորցրեց, սկսեց բոլորին ճանապարհ տալ, տեղը զիջել: Մի օր էլ գազանները նրա որջից լսեցին. «Ի՛-ա ա՛»:

Առակն ի՞նչ է ուզում ասել. որ պիտակը հաճախ կարող է Առյուծից էլ ուժեղ լինել:

- Ինչո՞ւ է վտանգավոր մարդկանց պիտակներ կպցնելը:
- Ինչու՞ է դժվար պիտակից ազատվելը:
- Առյուծին ի՞նչը դրդեց «Ի՛-ա ա՛» կանչել:
- Պիտակը մարդուն ի՞նչ կերպ կարող է փոխել:

Տնային առաջադրանք

Կարդա՛ Հանս-Քրիստիան Անդերսենի «Վայրի կարապները» հեքիաթը:

Մարդիկ ինչու՞ էին հավատացել, թե էլիզը կախարդ է:

ԴԱՍ 4 ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՋՈՒԿ ԳՈՐՇՈՒԿԻ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Գորշուկն անտառի բացատում մի հսկա երկաթե թռչուն տեսավ: Թռչնի փորի մեջ մի դռնակ կար, որից մարդիկ շարունակ ներս ու դուրս էին անում: Դա ինքնաթիռ էր, որը բևեռախույզներին սարքավորում և ուտելիք էր տանում: Աննկատ մագլցեց աստիճաններով ու մտավ ներս: Ինքնաթիռն օդ բարձրացավ և Գորշուկին օրորելով քնեցրեց: Երբ արթնացավ, թռչունն արդեն կանգ էր առել: Դրսում ամեն ինչ սպիտակ էր. սարերը սպիտակ էին, խոտի փոխարեն ևս սպիտակ ծածկոց էր: Հեռվում իր նման, բայց ամբողջովին սպիտակ արջերի մի ընտանիք արևկող էր արել: Փոքրիկ սպիտակ քոթոթը, Գորշուկին տեսնելով, մոտ վազեց, ու սկսեցին միասին խաղալ: Մեկ էլ մայր արջը Գորշուկին նկատեց ու սարսափահար բղավեց. «Ձյունի՛կ, հենց հիմա հեռացի՛ր այդ կպրոտ-կեղտոտ արարածից: Մի դրա գույնի՛ն նայիր: Հազար վարակ կարող է տարածել»: Գորշուկը շատ տխրեց. նա չէր հասկանում, թե մայր արջն ինչու այդպես, առանց ճանաչելու, միանգամից չսիրեց իրեն...

- **Ձեր կարծիքով՝ սպիտակ արջերը Գորշուկին ինչու՞ քշեցին:**

1. **Բաժանվե՛ք 3 խմբի և խաղացե՛ք «Առևտուր» խաղը:**

- Ի՞նչ էիք զգում, երբ մյուս խմբերից քարտեր էիք խնդրում:
- Արդյո՞ք սկսեցիք խուսափել ինչ-որ խմբերի դիմելուց: Ինչու՞:
- Ձեր կարծիքով արդարացի՞ էր ձեր հանդեպ նրանց վերաբերմունքը:

Ազգության, տարիքի, արտաքինի, հավատի և այլ առանձնահատկությունների պատճառով մարդկանց հանդեպ անհավասար, անարդարացի վերաբերմունքը կոչվում է **խտրականություն**:

- Երբևէ լսե՞լ եք խտրականության դեպքերի մասին:

Օտարը

Նրանք իրենց շուրջ շրջան գծեցին,
Իսկ ինձ թողեցին այդ շրջանից դուրս:
- Դու մեզ նման չե՛ս, գնա՛ այստեղից,
Քեզ հետ չե՛նք խաղա, հեռու՛ մեզանից:
Բայց սերը և ես խելքով հաղթեցինք.
Մի ավելի մեծ շրջան գծեցինք՝
Իրենց էլ առանք մեր շրջանի մեջ:

■ **Ինչպե՞ս հասկացաք բանաստեղծությունը: Բացատրե՛ք:**

2. **Դիտած ֆիլմերից, կարդացած գրքերից կամ իրական կյանքից գիտե՞ք մեկին, որը խտրականության է ենթարկվել: Ինչպե՞ս, ինչի՞ համար: Պատմե՛ք դասընկերներին:**

Տնային առաջադրանք

Կարդա՛ Հանս-Քրիստիան Անդերսենի «Անճոռնի ճուտիկը» հեքիաթը:

Ճուտիկին ինչու՞ էին «անճոռնի» մականունը տվել:



ԴԱՍ 5 ԹՈՒՅԼ ՉՏԱՆՔ

ՄՈԾԱԿԸ

Սերգեյ Միխալկով

Արջը մի օր Նապաստակին նեղացրեց. առանց պատճառի բռնեց ու ծեծեց նրան: Շլդիկը լաց եղավ, բայց ի՞նչ անի, ումի՞ց օգնություն խնդրի, երբ Արջն անտառում ամենաուժեղն է, դեռ Գայլն ու Աղվեսն էլ մտերիմ ընկերներն են: «Ո՞վ ինձ կօգնի»,- բարձրաձայն մտածում էր Շլդիկը, մեկ էլ ականջի տակ Մոծակի տզզոցը լսեց. «Ե՛ս»: «Դու ինչպե՞ս կարող ես ինձ օգնել,- զարմացավ Շլդիկը,- մի քեզ նայիր, քո չափերին ու Արջին»: «Անհոգ եղիր»,- ասաց Մոծակը: Թռավ, գտավ Արջին, որ շոգից ծառի ստվերի տակ պատսպարվել էր ու քնել: «Տը՜զզզ»,- Մոծակը սկսեց Արջի ականջի տակ իր երգը երգել: Արջն արթնացավ, ուզեց Մոծակին սատկացնել, ու տու՛ր թե կտաս՝ ողջ ուժով խփեց սեփական քթին: Այսպես ողջ օրը շարունակվեց. բավական է՝ Արջն ուզենար աչքերը փակել, Մոծակն ականջի տակ սկսում էր տզզալ: Արջը փորձում էր սատկացնել, բայց ամեն անգամ ինքն իր ձեռքից ծեծ էր ուտում: Հաջորդ առավոտ Արջն արդեն անքնությունից հյուծվել էր, չէր կարողանում ոտքի կանգնել, աչքերը փակվում էին: Շլդիկը տեսավ նրան, ու ծիծաղը եկավ: «Հը՛,- ասաց Մոծակը,- իսկ դու ասում էիր՝ փոքր եմ, Արջի հախից չեմ կարող գալ»:

- Ինչպիսի՞ ընկեր էր մոծակը: Նկարագրե՛ք:
- Իսկ դուք կարո՞ղ եք այդպիսին լինել:
- Պատահե՞լ է, որ դուք պաշտպանեք մեկին:
- Իսկ դուք երբևէ պաշտպանության կարիք ունեցե՞լ եք:

1. Բաժանվե՛ք խմբերի և ընտրե՛ք պատմություններից մեկը, ծանոթացե՛ք և փորձե՛ք որոշել, թե պատմության մեջ ով և ինչի համար է խտրականության ենթարկվել: Մտածե՛ք՝ եթե նրա ընկերը լինեիք, ի՞նչ կանեիք, ինչպե՞ս կպաշտպանեիք նրան:

ՓՈՔՐԻԿ ՄՈՒՔԸ

Վ. Հաուֆ

Փոքրիկ Մուքը նման չէր իր հասակակիցներին. նա կարճահասակ էր, փոքրամարմին, իսկ գլուխն անհամեմատ մեծ էր: Հայրը նրան չէր սիրում՝ համարում էր, որ իր տեսքով խայտառակ է անում իրեն: Կարծում էր, թե Մուքից ոչինչ դուրս չի գա: Բավական է՝ Մուքը փողոց դուրս գար,

անցորդները հռհռալով, բղավոցներով շրջապատում էին նրան ու սկսում ծաղրել: Երբ Մուքի հայրը մահացավ, ազգականները դուրս վռնդեցին խեղճ տղային: Մուքը թույլ էր և չէր կարող ինքն իրեն պաշտպանել: Նա տխուր-տրտում գնաց աշխարհով թափառելու, հույսով, որ կգտնվեն մարդիկ, որոնք կընդունեն իրեն՝ չնայած որ ինքը նման չէ մյուսներին:

ԿՈԶԵՏԸ

Վիկտոր Հյուգո

Փոքրիկ Կոզետի մայրը մնացել էր առանց ապրուստի միջոցի: Որպեսզի կարողանար աշխատել, ստիպված էր Կոզետին թողնել Թենարդիե ընտանիքի խնամքին: Թենարդիեներն էլ երկու աղջիկ ունեին և միանգամից չսիրեցին Կոզետին: Նրանց թվում էր, թե նա իրենց դուստրերի տեղն է գրավում և նրանց ուտելիքի բաժինն է խլում: Թենարդիե մայրիկը գուրգուրանքի ողջ պաշարն իր աղջիկներին էր տալիս, իսկ Կոզետին մնում էին հայհոյանքներն ու ծեծը: Տեսնելով, թե տիկին Թենարդիեն ինչպիսի չարությամբ է վերաբերվում Կոզետին, աղջիկներն էլ սկսեցին հալածել նրան:

ՉԻՊՈԼԻՆՈ

Ջանի Ռոդարի

Կոմսուհի Բալերի դղյակը չորս կողմից բարձր պարսպով էր շրջապատված: Պարսպի թե՛ դրսի, թե՛ ներսի կողմից ցուցանակներ կային: Ներսի ցուցանակն ասում էր՝ «Ելքը խստիվ արգելվում է», որպեսզի փոքրիկ կոմս Բալուկի մտքով չանցներ գյուղի աղքատ երեխաների հետ խաղալու գնալ: Դրսի կողմից ցուցանակը զգուշացնում էր՝ «Մուտքը խստիվ արգելվում է»: Սա էլ գյուղի երեխաների համար էր, որ չհամարձակվեին ցանկապատից ներս մտնել: Բալուկը ամեն օր երազանքով նայում էր ցանկապատից այն կողմ խաղացող երեխաներին: Մի օր մորաքույրներին խնդրեց, որ թույլ տան մյուս երեխաների հետ դպրոց գնալ, բայց այդ միտքը սարսափեցրեց տիկնանց. «Մեր ցեղում դեռ ոչ ոք աղքատ գյուղացու կողքը չի նստել: Ա՛յդ էր պակաս»:

- **Ինչպիսի՞ հատկանիշներ են պետք արդարությունը պաշտպանելու համար:**

Տնային առաջադրանք

Ինչպե՞ս ես հասկանում. բացատրի՛ր:

- Աշխարհում չարիքը շատանում է, երբ բարի մարդիկ լռում են:
- Լավություն արա ու ջու՛ր գցիր, ալիքները հետ կբերեն:

ԴԱՍ 6 ԻՆՉՊԻՍԻՆ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ ԼԻՆԵԼ

Ինչու՞ ենք ասում, թե պետք է լավը լինել: Ի՞նչ է դա նշանակում:

Մեր ամեն արարք մենք ենք որոշում՝ կարող ենք անել կամ չանել այն: Իսկ ամեն ընտրություն ունի իր հետևանքը: Մի բան անելիս պիտի որոշենք, թե ո՛ր հետևանքն է մեզ հարմար: Օրինակ՝ կարող ենք որոշել, որ ազնիվ լինելը ծեռնտու չէ, ավելի լավ է սուտ ասել: Կարող է նույնիսկ այդ պահին շահենք դրանից: Բայց եթե ազնիվ չենք, մարդիկ վաղ թե ուշ կհասկանան դա, ու մեկ էլ կնկատենք, որ մնացել ենք առանց ընկերների: Չէ՞ որ ստից էլ շահել էինք, որովհետև ընկերները հավատացել էին մեզ:

- Ի՞նչ կզգաս, եթե ընկերդ քեզ խաբի:

ՀԻՇԻ՛Ր

- Օգնի՛ր ընկերոջդ՝ մի օր քեզ էլ օգնություն պետք կգա:
- Օգնի՛ր ծերերին, մի օր դու էլ կմեծանաս:
- Պաշտպանի՛ր թույլերին, քեզանից ուժեղն էլ կա:

ՈՍԿԵ ԿԱՆՈՆ

Ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կուզեիր, որ քեզ հետ վարվեն:

- Ինչպե՞ս եք հասկանում. փորձե՛ք բացատրել:

Կարևոր մարդ լինելը լավ է, բայց լավ մարդ լինելն ավելի կարևոր է:

Արմենը ուրիշ քաղաք էր գնացել՝ ընկերոջը հյուր: Շաբաթ առավոտ էր: Տղաները որոշեցին թանգարան գնալ: Կանգառում մարդիկ հերթ էին կանգնել: Արմենը զարմացավ. իրենց մոտ մարդիկ կանգառում կանգնում են՝ ով ինչպես պատահի, իսկ երբ ավտոբուսը գալիս է, սկսում են իրար հրմշտելով բարձրանալ:

- Ձեզ մոտ երևի հատուկ օրենք կա, հա՞, որ կանգառում հերթ են կանգնում, - հարցրեց ընկերոջը:

- Չէ, ի՞նչ օրենք,- զարմացավ ընկերը,- ուղղակի միշտ բոլորն այդպես են արել: Երևի սովորություն է:

Երբ մարդիկ ինչ-որ բան շարունակ անում են, դա դառնում է սովորություն:

Ինչ-որ սովորություններ էլ կանոն են դառնում: Հերթ կանգնելն այդքան կարևոր սովորություն չէ, բայց մարդիկ հետևում են դրան, որովհետև այդպես **բոլորի համար ավելի հեշտ ու հարմար է**: Որովհետև **արդարացի** է:

1. **Գտե՛ք նախադասությունների կեսերը և կազմե՛ք «Իսկական ասպետի և բարեկիրթ օրիորդի վարքականոնների» ցանկ:**

- Իսկական ասպետը դաշտանում է
- Իսկական ասպետը դռնից մտնելիս աղջիկներին
- Իսկական ասպետը և բարեկիրթ օրիորդը առաջ չեն խցկվում, սպասում են
- Իսկական ասպետը և բարեկիրթ օրիորդը միշտ ճշտապահ են, երբեք
- Իսկական ասպետը աղջիկների վերակուն բռնում
- Իսկական ասպետը շենքի ներսում գլխարկը
- Իսկական ասպետը և բարեկիրթ օրիորդը կաստում են
- Իսկական ասպետը տրանսպորտում տեղը
- Բարեկիրթ օրիորդը միշտ պատրաստ է օգնության
- Իսկական ասպետը և բարեկիրթ օրիորդը երբեք չեն
- Բարեկիրթ օրիորդը կարող է շենքի ներսում

- զիջում է աղջիկներին և տարեցներին:
- խոսքումները, պարտաճանաչ են:
- գլխարկով մնալ:
- ստում, վստահելի են:
- ճանապարհ է տալիս:
- իրենց հերթին:
- չեն ուշանում:
- հանում է:
- է, որ հագնեն:
- թույլերին, օգնում ընկերներին:
- ձեռք մեկնել:

- Վարքականոններից որո՞նք էին արդեն ծանոթ:
- Ի՞նչ նոր բան սովորեցիք:

Տնային առաջադրանք

Կարո՞ղ ես բարեկիրթ կանոնների ցանկը շարունակել՝ քո իմացածից լրացումներ անել (սեղանի շուրջը, տրանսպորտում, փողոցում, կինոյում կամ թատրոնում, գրադարանում կամ թանգարանում):

Firefox https://ebooks.bonee.net/books/tyhu/

ԴԱՍ 7 ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Երանելի քաղաքը

Մի շատ սովորական քաղաք կար՝ իր ստվերոտ ծառուղիներով, մաքուր փողոցներով ու գեղեցիկ շենքերով: Քաղաքի բնակիչներն ամբողջ օրը բարեխիղճ աշխատում էին, իսկ երեկոյան՝ հանգստանում, ով ինչպես կարող էր: Լավ էին ապրում: Բայց մի օր նրանց թվաց, թե շատ են աշխատում ու քիչ են հանգստանում: Այնքա՜ն հաճելի զբաղմունքներ կան, ի՞նչ իմաստ ունի ժամանակը վատնել ոչ հաճելի պարտականությունների վրա, եթե կարելի է կյանքը վայելել: Որոշեցին այսուհետև միայն դուրեկան զբաղմունքներին նվիրել ժամանակը:

1. Բաժանվե՛ք 5 խմբի, ծանոթացե՛ք իրավիճակներին և մտածե՛ք, թե դրանք ինչ հետևանքներ կարող են ունենալ, ովքեր կտուժեն դրանից և ինչպես: Ներկայացրե՛ք դասարանին:

1-ին խումբ

Հիվանդանոցի բժիշկները շատ լավ շախմատ էին խաղում: Ամենամեծ հիվանդասենյակը դատարկեցին, սեղան-աթոռներ շարեցին ու որոշեցին շախմատի մրցույթ անցկացնել: Ողջ անձնակազմը հավաքվեց սենյակում, և ուշի-ուշով հետևում էին, թե ով է հաղթելու: Իսկ այդ միջոցին…

2-րդ խումբ

Հացի գործարանի և հրշեջ ծառայության աշխատողները որոշեցին աշխատելու փոխարեն ֆուտբոլի մրցույթ կազմակերպել՝ «Հացթուխներն» ընդդեմ «Հրշեջների»: Մնացած աշխատողները, բնական է, պետք է գնային խաղին, որ ոգևորեին իրենց թիմերին: Իսկ քաղաքում …

3-րդ խումբ

Հայրիկներն ու մայրիկները ամեն առավոտ աշխատանքի գնալու փոխարեն որոշում էին, թե այդ օրն ինչ հաճելի բանով զբաղվեն: Հայրիկները գնում էին ձուկ որսալու կամ մարզվելու, կամ էլ պարզապես նարդի էին խաղում: Իսկ մայրիկները որոշեցին, որ լվացքը, արդուկը, մաքրությունը, ճաշ եփելը տաղտկալի գործեր են: Ավելի լավ է վարսավիրանոց գնան՝ գեղեցկանալու: Իսկ ընտանիքի մյուս անդամները…

86 von 98 12.02.2021, 09:28

4-րդ խումբ

Շենքերի բակերում աղբարկղեր էին տեղադրված, որոնք ամեն առավոտ կանոնավոր կերպով դատարկվում էին: Բայց ո՞վ հավես ուներ աղբը բակ իջեցնելու: Բնակիչները սկսեցին աղբն ուղղակի լուսամուտներից դուրս թափել: Աղբահավաքներն էլ զբաղված էին իրենց համար հաճելի գործերով՝ կինո էին գնում, մրցումներ կազմակերպում... Շուտով քաղաքը ...

5-րդ խումբ

Երանելի քաղաքի ոստիկանները սիրում էին երգել: Նրանք մեկ ամսով մեկնեցին հարևան քաղաք՝ երգի փառատոնին մասնակցելու: Քաղաքում ոչ մի ոստիկան չմնաց: Այդ ընթացքում քաղաքում ...

■ **Իսկ ի՞նչ կպատահեր, եթե ուսուցիչներն իրենց պարտականությունները չկատարեին: Ի՞նչ հետևանքներ կլինեին:**

Ամեն մարդ իրավունք ունի **առողջ լինել, կրթություն ստանալ, պաշտպանված լինել, ապրել մաքուր միջավայրում, սնվել, հանգստանալ:**

2. **Ու՞մ պարտականություններն են ապահովում, որ մենք օգտվենք այս իրավունքներից: Թվարկե՛ք:**

Ի՞նչ կանոններ պիտի իմանանք և ի՞նչ պարտականություններ պետք է ինքներս կատարենք, որպեսզի

- առողջ լինենք,
- խելացի լինենք և շատ բան իմանանք,
- մաքուր միջավայրում ապրենք,
- ապահով ու պաշտպանված լինենք:

3. **Գտեք, թե ո՛ր պարտականություններն ու կանոնները կատարելը մեր և ուրիշների ո՛ր իրավունքն են ապահովում.**

1.Հանգստի իրավունք	ա) ձեռքերը հաճախ լվանալ
2.Սովորելու իրավունք	բ) չընդհատել խոսողին
	գ) խնամել բույսերը
	դ) դասը չխանգարել

3. Մաքուր միջավայրի իրավունք

4. Խոսելու, լսված լինելու իրավունք

5. Առողջության իրավունք

6. Հարգված լինելու իրավունք

7. Ապահով լինելու իրավունք

8. Հավասարության իրավունք

9. Սեփական կարծիքի իրավունք

ե) դասագրքերը չփչացնել
զ) շրջապատը չաղտոտել
է) մաքրություն անել
ը) միմյանց օգնել տնային գործերում
թ) չաղտոտել օդը, չծխել
ժ) ուշ ժամերին չաղմկել
ի) լսել ուսուցչին
լ) մասնակցել ծառատունկի
խ) լսել դիմացինին
ծ) մարզվել
կ) չխուսափել պատվաստումներից
հ) հարգել ուրիշի կարծիքը
ձ) չվիրավորել դիմացինին
ղ) ժամանակին սնվել
ճ) ենթարկվել օրենքներին
մ) պաշտպանել թույլին
յ) չծաղրել նրանց, ովքեր մեզնից տարբեր են
ն) արդարացի վարվել

ԴԱՍ 8 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

1. **Մի երկար հորիզոնական սլաք նկարիր: Սկիզբը նշի՛ր «Ծ» տառով՝ դա քո ծննդյան թիվն է: Գծի կենտրոնում գրի՛ր «Ն» տառը՝ դա ներկան է: Սլաքի ծայրին գրի՛ր «Ա» տառը՝ դա քո ապագան է:**

• Պատկերացրու, թե սա քո կյանքի գիծն է: «Ծ» և «Ն» կետերի միջև ընկած հատվածում նշիր քո կյանքում պատահած կարևոր իրադարձությունները, հաճելի հիշողությունները:

• Ապա փորձի՛ր պատկերացնել, թե ինչպիսին ես տեսնում ապագան՝ քո երազանքները, ձգտումները, նպատակները, և նշի՛ր գծի շարունակության վրա՝ հերթականությամբ:

■ **Շրջելով՝ ծանոթացե՛ք միմյանց աշխատանքներին և քննարկեք:**

ԴԵՄՈՍԹԵՆԵՍԸ

Հույն նշանավոր հռետոր Դեմոսթենեսը փոքր տարիքում շատ երկչոտ տղա էր, լեզվի արատ ուներ ու նվազ ձայն: Փոխարենը նա շատ համառ էր, նպատակասլաց և աշխատասեր: Նա ժամեր շարունակ կանգնում էր ծովի ափին ու արտասանում՝ փորձելով ձայնը լսելի դարձնել ժայռերին բախվող ալիքների աղմուկի միջից: Լեզվի արատը հաղթահարելու համար նա բերանը խճաքարեր էր լցնում և փորձում էր խոսել այնքան, մինչև որ խոսքը հասկանալի դառնար: Այս համառությամբ մարզվում էր տարիներ շարունակ: Չնայած դրան՝ Դեմոսթենեսի առաջին ելույթները ձախողվեցին, և ունկնդիրները սուլոցներով ծաղրեցին նրան: Բայց Դեմոսթենեսը չհուսահատվեց ու թևաթափ չեղավ: Նա համառորեն շարունակում էր տքնաջան աշխատել:

Վերջապես Դեմոսթենեսին հաջողվեց հասնել նպատակին և դառնալ նշանավոր հռետոր: Նրա համբավը տարածվեց Հունաստանի սահմաններից էլ դուրս:

■ Ի՞նչ հասկացաք պատմությունից:

■ Իր ո՞ր հատկանիշների շնորհիվ Դեմոսթենեսը հասավ նպատակին:

■ Իսկ դուք ունե՞ք որևէ ցանկություն, որին հասնելու համար պետք է օրինակ վերցնեք Դեմոսթենեսից:

2. **Բաժանվե՛ք 4 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խումբ 5 թերթիկ վերցրեք (տետրի կես էջի չափ), ցանկալի է՝ տարբեր գույների: Փորձե՛ք հիշել հատկանիշներ, որոնք, ըստ ձեզ, կարևոր են հաջողության հասնելու ճանապարհին, և գրե՛ք առանձին թերթիկների վրա:**

Ներկայացրե՛ք ձեր **«հաջողության աղյուսները»**:

Խմբերով հերթով մոտեցե՛ք գրատախտակին և միացյալ ուժերով, կրկնությունները մի կողմ թողնելով, թերթիկներն այնպես փակցրեք, որ սանդուղք ստացվի: Ապա խմբերով թղթի կտորի վրա նկարեք կամ գրեք հաջողություն խորհրդանշող որևէ նկար կամ ցնծություն արտահայտող բացականչություն և փակցրե՛ք սանդուղքի գագաթին:



Տնային առաջադրանք

Հաջողության հասնելու ճանապարհին կարևոր հատկանիշները տեղադրի՛ր խաչբառում և կկարդաս ևս մեկ կարևոր հատկանիշ:

բարի, համառ, ազնիվ, վճռական, ճշտապահ, աչալուրջ, աշխատասեր, ընկերասեր, համբերատար, բարյացակամ , գրագետ

Վերջաբանի փոխարեն

Ռուբեն Հախվերդյան

Օրոր

Ես հնարել եմ այս երգը,
Որ դու հանկարծ չտխրես,
Որ կորցրած քո երազը
Քո քնի մեջ դու գտնես:
Ու թե սիրես այս աշխարհը
Եվ հավատով այդ ապրես,
Դու քո կյանքի ճանապարհը
Միշտ լուսավոր կտեսնես:

Թե մթնի քայլելու քո ճամփան մի օր,
Թող հնչի իմ այս երգը որպես օրոր:

Քոնն է հրաշք այս աշխարհը.
Ե՛վ այս հեքիաթն իրական,
Ե՛վ բազմազան մոլորակը,
Ե՛վ փորձության քո ճամփան:
Ես հնարել եմ այս երգը,
Որ դու չհուսահատվես,
Քեզ պարգևած այս հրաշքը
Քո ձեռքից բաց չթողնես:

Հավատա և սիրիր, իմ փոքրիկ ընկեր,
Կյանքը այս քեզ տրված է որպես նվեր:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1 ԲՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1 ԵՐԿԻՐԸ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՒՆՆ Է ՄԵՐ ՄՈԼՈՐԱԿԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ 3
ԴԱՍ 2 ՄԱՅՐՑԱՄԱՔՆԵՐ 6
ԴԱՍ 3 - 4 ՀԵՏԱԶՈՏԵՆՔ ՄԱՅՐՑԱՄԱՔՆԵՐԸ 8
ԴԱՍ 5 ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ. ՀԱՐԹԱՎԱՅՐԵՐ, ԲԼՈՒՐՆԵՐ, ԼԵՌՆԵՐ 15
ԴԱՍ 6 ՄԵԶ ՄՆՈՂ ՀՈՂԸ 18
ԴԱՍ 7 ՀՈՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 20
ԴԱՍ 8 ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ 22
ԴԱՍ 9 ԾՈՎԵՐ ԵՎ ՕՎԿԻԱՆՈՍՆԵՐ 25
ԴԱՍ 10 ԳԵՏԵՐ, ԼՃԵՐ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 28
ԴԱՍ 11 ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ ՋՈՒՐԸ 30
ԴԱՍ 12 ԵՐԿՐԻ ՕԴԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏԸ 34
ԴԱՍ 13 ԽՆԱՅԵՆՔ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԸ 37
ԴԱՍ 14 ՓՈԽԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 39

ԹԵՄԱ 2 ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԸ

ԴԱՍ 1 ՄԱՐԴԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԻԿ Է 43
ԴԱՍ 2 ԱՇԽԱՏԱՆՔ, ԱՐՀԵՍՏ, ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ 46
ԴԱՍ 3 ԻՆՉՊԵՍ ԵՎ ԻՆՉՈՒ Է ՄԱՐԴԸ ՓՈԽԵԼ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 49
ԴԱՍ 4 ԻՆՉ Է ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 53
ԴԱՍ 5 ԻՆՉ Է ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 55
ԴԱՍ 6 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԳՈՎԱԶԴ 58
ԴԱՍ 7 ԲՆՈՒԹՅԱՆ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԴԵՐԸ ԴՐԱՆՈՒՄ 60
ԴԱՍ 8 ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՐ ԴԵՐԸ ԴՐԱՆՈՒՄ 64
ԴԱՍ 9 ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 68

ԹԵՄԱ 3 ՄԱՐՄԻՆՆԵՐ, ՆՅՈՒԹԵՐ, ՄԱՍՆԻԿՆԵՐ

ԴԱՍ 1 ԻՆՉԻՑ ԵՆ ԿԱԶՄՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 70
ԴԱՍ 2 ՉԱՓԵՐ ՈՒ ՉԱՓՈՒՄՆԵՐ 73
ԴԱՍ 3 ՉԱՓԵՐ ՈՒ ՉԱՓՈՒՄՆԵՐ՝ ԺԱՄԱՑՈՒՅՑ ԵՎ ՋԵՐՄԱՋԱՓ 76
ԴԱՍ 4 ԼՈՒՅՍ ԵՎ ՁԱՅՆ 79

ԹԵՄԱ 4 ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԱՍ 1 ՏԵՂԱՆՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՎ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ 82
ԴԱՍ 2 ՏԵՂԱՆՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ 85
ԴԱՍ 3 ՏԵՂԱՆՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ, ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ 87
ԴԱՍ 4 ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՂ ԱՆՑՅԱԼՈՒՄ, ՓՅՈՒՆԻԿԵՑԻՆԵՐ 90
ԴԱՍ 5 ՀԻՆ ՀՈՒՅՆԵՐ 92
ԴԱՍ 6 ՀԻՆ ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ 95
ԴԱՍ 7 ՉԻՆԱՍՏԱՆ 97
ԴԱՍ 8 ՀՆԴԿԱՍՏԱՆ 100
ԴԱՍ 9 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ 102
ԴԱՍ 10 ԱՖՐԻԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ 104
ԴԱՍ 11 ՇՈՒՐՋԵՐԿՐՅԱ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ 107
ԴԱՍ 12 ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ 110
ԴԱՍ 13 ԱՆՏԱՐԿՏԻԴԱՅԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ 113
ԴԱՍ 14 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԻԵԶԵՐՔՈՒՄ ԵՎ ՕՎԿԻԱՆՈՍՈՒՄ 116

ԹԵՄԱ 5 ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

ԴԱՍ 1 ՄԻԱԿՆ ՈՒ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻՆ 121
ԴԱՍ 2 ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ԵՐԿԻՐ 123
ԴԱՍ 3 ՄԵՐ ԱՆՑԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԸ 127
ԴԱՍ 4 ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 133
ԴԱՍ 5-6 ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԵՐԿՐՈՎ 136
ԴԱՍ 7 ԻՄ ՔԱՂԱՔԸ 139
ԴԱՍ 8 ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԻՆ 141
ԴԱՍ 9 ՈՒՄԻ՞Ց Է ԿԱԽՎԱԾ 145
ԴԱՍ 10 ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ 147
ԴԱՍ 11 ԹՈՒՅԼ ՉՏԱՆՔ 149
ԴԱՍ 12 ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՏԵՍԵ՞Լ ԵՍ, ԱՍԱ՛ 151

ԹԵՄԱ 6 ԵՍ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 1 ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ 153
ԴԱՍ 2 ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ԹՅՈՒՐԸՄԲՌՆՈՒՄԻՑ 156
ԴԱՍ 3 ՊԻՏԱԿՆԵՐ 159
ԴԱՍ 4 ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 161
ԴԱՍ 5 ԹՈՒՅԼ ՉՏԱՆՔ 163
ԴԱՍ 6 ԻՆՉՊԻՍԻՆ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ ԼԻՆԵԼ 165
ԴԱՍ 7 ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ 167
ԴԱՍ 8 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ.....170

ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՆՈՒՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

**Հանրակրթական դպրոցի
4-րդ դասարանի դասագիրք**

Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:

Տպագրությունը՝ օֆսեթ: 6 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 6300:

Հրատարակիչ տնօրեն ՍՈՒՐԵՆ ՉՈՒՆԳՈՒՐՅԱՆ
Նկարիչ, համակարգչային ձևավորող ՆՈՐԱՅՐ ՄԵԼԻՔՅԱՆ
Սրբագրիչ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ

«ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Գևորգ Քոչարի 21, հեռ.՝ (37410) 52-88-00,
E-mail: astghik59@gmail.com,
www.astghik.am,